


ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՈՐԳ ՏԷՐ - ՎԱՐԴԱՆԵԱՆ
պատմական գիրք. դոկտոր, ՄՄ

ՂԱԶԱՐ ՓԱՐԱԿԵՑՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԹՂԹԻ ՏՊԱԳԻՐՆԵՐԻ ԲՆԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ



ազար Փարպեցու Հայոց Պատմութեան առաջին երեք տպագրութիւնները 1793, 1873 եւ 1891 թթ.¹ Վենետիկում իրականացրել է Մխիթարեան միաբանութիւնը. չորրորդն արդէն Ս. Մալխասեանցի «Պատմագիրք Հայոց» շարքի առաջնեկն էր՝

¹ 1. Ղազարայ Փարպեցոյ արարեալ Պատմագրութիւն. ի բաժանմանէ թագաւորութեան Արշակունեաց մինչեւ ցօր մարգարանութեան Վահանայ Մամիկոնոյ. Տպագրեալ յամի Տեառն 1793, ի մարտի 22, ի թուականիս հայոց ՌՄԽԲ.: Արդեամբք եւ ծախիւք երկուց հարազատաց՝ Բարադամեանց պարոն Զաքարիւն եւ պարոն Յովսէփիւն Շահրիմանեանց: Ի հայրապետութեան տեառն Ղուկասու Հայոց կաթողիկոսի: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, յանուն Անտոնի Պօռթօլի, հրամանաւ մեծաւորաց. 320 էջ: Բովանդակութիւնից արտածած-յօրինած խորագրեր է դրել լուսանցներում, վերջում էլ՝ էջ 318-20, այդ խորագրերի ցանկն է, գրքի էջահամարներով հանդերձ:

2. «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», հրատ. Հ. Ալիշան, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1873, ՌՅԻԲ., 11 չհ., 639 էջ: Արձանագրուած է երեւի այս հրատարակութեան տպարանային նաեւ մի փոփոխակ՝ «2836. Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան (Ընտիր Մատենագիրք Է.)», Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1875, ՌՅԻԲ., 12, 639 էջ, շար. 8,5x4,5 սմ». տնս «Հայ գիրքը 1851-1900 թուականներին», [կազմեցին] Ն. Ոսկանեան, Ա. Սաւալեան, Մ. Սողոմոնեան, Օ. Գիւլումեան, Ա. Սահակեան, Ս. Թադէոսեան, Երեւան, 1999, էջ 219:

3. «Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», երրորդ տպագր. («Ընտիր մատենագիրք Է.»), Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1891 - ՌՅԻՆ., ԺԷ., 719 էջ:

Ղազարայ Փարպեցույ պատմութիւն Հայոց
 եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, Աշխատութեամբ
 Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տիփլիս, արագատիպ
 Մնացական Մարտիրոսեանցի, 1904. 4 չի., ԺԶ., 211, 3 չի. էջ²:

Սա երրորդ տիտղոսաթերթն է, կայ նաեւ մատենաշարային առաջինը՝ «Պատմագիրք Հայոց, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, ի ձեռն բանասիրաց հայոց. հատոր առաջին, գիրք չորրորդ. Ղազար Փարպեցի» (չհ. էջ 2), ապա երկրորդը՝ «Պատմագիրք Հայոց. Ղազար Փարպեցի» (չհ. էջ 3): Սկսւում է «Յառաջաբան»ով (էջ Ա-ԺԲ.), ապա՝ «Ցանկ գլխոց»՝ Ա-Ճ. (էջ ԺԳ-ԺԶ.)³, բնագրերը՝ «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց» (էջ 1-182) եւ «Թուղթ Ղազարայ Փարպեցույ. Մեղադրութիւն ստախոս արեղայից» (էջ 183-204), «Ցանկ յատուկ անուանց» (էջ 205-11), «Ցանկ վկայութեանց ի Սուրբ գրոց» (213-4)⁴, «Նկատուած վրիպակներ» (էջ 215):

«Ստ. Մալխասեանց» ստորագրուած առաջաբանի մէջ հեղինակի ծրագրային շարադրանքի որեւէ տարր չկայ. սկսւում է Փարպեցուն վերաբերող կենսագրական տեղեկութիւններով, շարունակւում նրա Պատմութեան եւ առ Վահան Մամիկոնեան Թղթի նախորդ տպագիրների (էջ Գ-Դ.), ապա՝ ձեռագրերի քննական նկարագրութիւններով: Թուղթը եւս ունի նախորդած երեք տպագրութիւն. առաջինն արել է Մ. Էմինը⁵, միւս երկուսը Պատ-

² Այս տպագրի էջահամարները նշում ենք վերը՝ շարադրանքի մէջ: Սրա բնագիրը նոյնաբար վերատպուած է ի՝ «Մատենագիրք Հայոց», Բ. հտ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2201-2394 (այսուհետեւ՝ ՄՀ):

³ Հիմնականում վենետիկեան առաջին տպագրից է, մասամբ՝ Ս. Մալխասեանի յօրինածն է. «Պարապոդների դիւրութեան համար՝ յարմար համարեցի բնագրից առաջ դնել գլուխների համառոտ բովանդակութիւնը - Ցանկ գլխոց, երբեմն հետեւելով Ա. տպագրին, երբեմն նրանից անկախ» (էջ ԺԱ.). պահպանել է նաեւ Վենետիկի 1873 թ. Բ. տպագրից եկող՝ բնագրի տրոհումը երեք դրուագի: ՄՀ, Բ.՝ ունի Ա-Ճ. հատուածաբաժանումը, բայց այս ցանկը՝ ոչ:

⁴ Բնագրում ուղղակի վկայութիւնները չակերտուած են, անուղղակիները՝ ոչ, բոլորն ընդհանրապէս շարադրանքի մէջ որեւէ նշան չունեն, միայն այս՝ «Ցանկ վկայութեանց»ում ամէն յոման դիմաց նշուած են բնագրի էջի եւ տողի համարները. «Սուրբ գրքի հատուածների տեղերը նշանակելիս՝ ընդհանրապէս զանց եմ արել նշել այն հատուածների տեղերը, որոնք բնագրում չեն բերուած իբրեւ վկայութիւն, այլ ինչպէս խօսողի սեփական խօսքերը» (էջ ԺԲ.):

⁵ «Ղազարայ Փարպեցույ Թուրք առ Վահան տէրն Մամիկոնէից», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին՝ տեսուչ Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց, Մոսկվա, ի տպ. Վլադիմիրայ Գոթթիէ, 1853, 68 էջ: Այս գրքի առաջաբանի մի հատուած՝ «Նկարագիր կենաց Ղազարայ Փարպեցույ եւ ժամանակին, յորում եկաց» խորագրով հետագայում հրատարակուել է՝ «Արշալոյս արարատեան», 1859, Հ^ա 592-595 (Մարտի 6 - Ապրիլի 17). տնն Ս. Ա. Շախկեան, Հայ նոր գրականութեան ժամանակագրութիւն (1851-1865), Երեւան, 1983, էջ 109:

մոլթեան Բ. եւ Գ. տպագիրներէի հետ են: Իսկ ձեռագրերը պատկերուած են ըստ Գ. Տէր-Մկրտչեանի հետազոտութեան⁶, որի համաձայն Մաշտոցեան Մատենադարանի (այսուհետեւ՝ ՄՄ) այժմեան Հ^մ 2639 ձեռագիրը (Բաղէշի Ամլորդեոյ վանք, 1672 թ.) «միակ մայր ձեռագիրն է, որ իբրեւ աղբիւր է ծառայել մինչեւ այժմ կատարուած թէ՛ Պատմութեան եւ թէ՛ Թղթի բոլոր տպագրութիւններին եւ եղած միւս ընդօրինակութիւններին (Էջմիածնի Հ^մ 1688 ձեռագրին, Վենետիկի օրինակին եւ Վիեննայի օրինակին): Նա ծառայել է տպագրութիւնների համար աղբիւր ո՛չ անմիջապէս, այլ միջնորդութեամբ անխնամ ընդօրինակութիւններին» (էջ Ժ.): Ըստ գրչութեան վայրերի անունների՝ Գ. Տէր-Մկրտչեանը Հ^մ 2639ը կոչել է B (Բաղէշի), իսկ Էջմիածնի Հ^մ 1688ը, որ ՄՄ Հ^մ 1891ն է՝ E (Էջմիածնի), տպագիրների հիմք, այսինքն՝ Վենետիկի Միխիթարեան մատենադարանին պատկանող ձեռագրերն էլ համարել են ընդօրինակուած այս E-ից, իմա՝ ՄՄ Հ^մ 1891ից: Ապա՝ կրկին հիմնուելով Գ. Տէր-Մկրտչեանի պարզած այն իրողութեան վրայ, որ «E-ն մի բաւական անխնամ ընդօրինակութիւն է B-ից. տեղ տեղ B-ն թռչում է բառեր, երբեմն ամբողջ նախադասութիւններ, բաց է թողնում մի տառ կամ մի նախդիր... բայց չունի ո՛րեւէ աւելի բառ կամ նախադասութիւն, որ չգտնուէր B-ի մէջ» (էջ Զ.), Մալխասեանցը վճռել է՝ «աւելորդ դատեցինք համեմատել Երկրորդ ձեռագիրն էլ եւ նրա տարբեր ընթերցուածները բերել. դա կլինէր զուր ժամավաճառութիւն, առանց որեւէ օգուտի՝ բնագրի ուղղագրութեան համար. չխօսելով դեռ այն մասին, որ ծանօթութիւնների աւելորդ խճողումը միայն դժուարացնում է պարապողների աշխատանքը՝ այս ծանօթութիւններով բնագիրը ուսումնասիրելու դէպքում» (էջ Ժ.):

Այսպիսով, համեմատել են «միակ մայր» ձեռագիրը՝ ՄՄ Հ^մ 2639ը եւ Կարենեան Հ^մ 916 կամ Էջմիածնի հին Հ^մ 936, որ է՝ ՄՄ Հ^մ 1522 ձառնորդի (ԺԲ. դ. վերջ, Յովհաննավանք) 1ա-14ա էջերը (Տեսիլ Սահակայ Պարթեւի), Պատմութեան ու Թղթի երեքական հրատարակութիւնները. արձանագրել են նաեւ տարբեր բանասէրների (յատկապէս Նորայր Բիւզանդացու) առաջարկած սրբագրութիւնները, որոնցից համոզիչ համարածները

⁶ Գ. Տէր-Մկրտչեան, Ղազար Փարպեցու ձեռագրերը, «Արարատ», 1901/ԺԱ.-ԺԲ., էջ 542-549. վերջում՝ «29 սեպտ. 1901», ունի նաեւ տիտղոսաթերթ չունեցող, «Дозволено цензурою 22 января, 1902 г., г. Тифлисъ» մակագրութեամբ առանձնատիպ հրատ.՝ Գ. Տէր-Մկրտչեան, Ղազար Փարպեցու ձեռագրերը, Արտատպութիւն 1901 թ-ի «Արարատ»-ի նոյեմբ.-դեկտ. համարից, էջ 542-549 (1902, 8 էջ, շար. 24x16 սմ): Վերահրատարակուած է՝ Գ. Տէր-Մկրտչեան, Հայագիտական ուսումնասիրութիւններ, հտ. Ա., Երեւան, 1979, էջ 340-351 (այսուհետեւ՝ Միաբան, ՀՈւ, Ա.): Սրա մի գրախօսութիւն՝ Հ. Ներսէս Ակիւնեան, Հանդէս ամսօրեայ, 1903, էջ 92-93:

դրել են բնագրի մէջ, միւսները՝ տողատակում՝ ամէն անգամ նշելով առաջարկի հեղինակի անունը. Մալխասեանցը եւս սրբագրութիւններ է արել՝ առանց իր անունը նշելու (էջ ԺԱ.):

Համեմատուած նիւթերը, պայմանանիշերով հանդերձ (քաղել ենք «Բացատրութիւն Համառօտագրութիւնների եւ նշանների» ցանկից՝ էջ ԺԲ.)⁷.

Ձ. - Ձեռագիր էջմիածնի մատենադարանի Հ^{մր} 611 Գէորգ. ցուց. = Հին Հ^{մր} 2463 (ՄՄ ձեռ. Հ^{մր} 2639, ժամանակ՝ 1672 թ).

ԲՁ. - Ձեռագիր էջմիածնի մատենադարանի Հ^{մր} 1688, I = Հ^{մր} 1646, I (ՄՄ ձեռ. Հ^{մր} 1891, ժամանակ՝ 1774 թ., ըստ էջ է., ծնթ. I՝ գրիչ՝ Ղուկկիանոս Աշտարակեցի⁸. Հի համեմատուել, միայն ըստ հարկի յիշատակուել է).

Վ. - Թղթի՝ Վիեննայի Մխիթարեանների օրինակը. ձեռ. Հ^{մր} 257, 5ա-9բ (ԺԹ. դ.)⁸.

Ճառ. - Ճառնտիր էջմիածնի մատենադարանի Հ^{մր} 936,3=Հին [Կարենեան] Հ^{մր} 916,3 (ՄՄ ձեռ. Հ^{մր} 1522)⁹.

Ատ. - Առաջին տպագիր Պատմութեան, Վենետիկ 1793.

Ատ. - Առաջին տպագիր Թղթի, Մոսկուա, 1853.

Բ, Գտ. - Երկրորդ եւ Երրորդ տպագիր Պատմութեան եւ Թղթի, Վենետիկ, 1873, 1891.

[Գործածած պայմանական նշաններ]

() - փակագիծ գործածուած է որոշելու համար Ստ. Մալխասեանցի աւելացրած բառերը, որոնք չկան Ձ.-ում:

[] - անկիւնաւոր. գործածուած է որոշելու համար այն բառերը, որոնք կան Ձ.-ում, բայց Ստ. Մալխասեանցը համարել է ընդմիջարկութիւն:

* - աստղ. գործածուած է կասկածելի ուղղագրական ձեւ ունեցող բառերից առաջ՝ ցոյց տալու համար, որ այդ ձեւը տպագրական վրիպակ է:

՝ կամ՝ նշանների մէջ են դրւում այն բառերը կամ հատուածները, որոնց վերաբերում է ծանօթութիւնը:

Այս գրքով հայ իրականութեան մէջ սկսեց կիրառուել բնագրի եւ ընթերցումների ձեւաւորման մի նոր սկզբունք. բնագրի կամ բուն շարադ-

⁷ Նոյն էջում կայ նաեւ «Մատենագրութիւն» խորագրով մատենագիտական մի ցանկ՝ 1-4 թուարկմամբ «Ա. Թարգմանութիւններ», եւ 1-10՝ «Բ. Ուսումնասիրութիւններ»:

⁸ Մանրամասները տես «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանցի Վիեննա», կազմեց Հ. Յակոբյան Վ. Տաշեան՝ Մխիթ. ուխտէն, տպագրեալ նպաստի Կայսերական Ճեմարանի Գիտութեանցի Վիեննա, Վիեննա, Մխիթ. տպ., 1895, էջ 657 (լոյս է տեսել 1896 թ. սեպտեմբերին. այսուհետեւ՝ Վիեննայի ցուցակ, Ա.): Թղթի մնացեալ ձեռագրերն են՝ ՄՄ Հ^{մր} 2622. 1804-1856 թթ., ՄՄ Հ^{մր} 2628. 1823-1825 թթ., Պոլիս, ՄՄ Հ^{մր} 8843. 1830 թ.:

⁹ ՄՀ, Բ. հտ., էջ 2200. այս ձեռագրի համարը գրել են՝ «ՄՄ, ձեռ. թիւ 933»:

րանքի ձախ լուսանցում հնգեակներով գրուած են տողերի կարգային համարները՝ 5, 10, 15 եւլն, իսկ տողատակում նոյն համարներով արձանագրուած են ընթերցումներն ու ծանօթութիւնները. սա թէ՛ բուն շարադրանքն անշփոթ կարդալու եւ թէ՛ տողատակը արագ եւ ճիշտ ընկալելու լաւ եղանակ է, որ փոխառնուած էր ԺԹ. դարի եւրոպական հրատարակութիւններից եւ որ մեր միջնադարեան բնագրերի գիտական հրատարակութիւնների մէջ շարունակուեց քսաներորդ դարի ամբողջ ընթացքում կամ նախահամակարգչային (կապարի) շարուածքով տպուած գրքերի մէջ¹⁰:

Հասկանալի է, որ այս հրատարակութիւնը նշանակալի էր թէ՛ ինքնին եւ թէ՛ որպէս մատենաշարի առաջնեկ, ըստ այդմ եւ անուշադրութեան մատնուել չէր կարող, այսինքն՝ արձագանգները չուշացան. նոյն 1904 թ. նշանաւոր բանասէր Յ. Վ. Տաշեանը հանդէս եկաւ հանգամանալի գրախօսութեամբ¹¹, որ հիմնականում դրական-դրուատական ոճի մանրամասն գրածանօթութիւն է, միաժամանակ ունի շատ օգտակար դիտարկումներ, որոնցից քաղում ենք մեր նպատակադրման համար կարեւոր մի քանիսը:

Պատմութիւնը երեք դրուագի եւ Ա-Ճ. հատուածների տրոհելու մասին գրել է. «Միակ կէտ մը կար որ ներկայ հրատարակութեան հետ չէր միաբաներ բոլորովին, եւ այն է՝ որ Զեռագիրք այս գլխակարգութիւնքն կանոնաւորապէս չեն շարունակեր մինչեւ վերջ: Որով հրատարակիչը ստիպուած էին հետեւիլ Վենետիկեան Բ. տպագրի բաժանմանց, որ արդէն կերպով մը «հաստատուած գլխակարգութիւն» եղած է եւ ըստ այնմ շատ տեղ յիշուած նոր գրականութեան մէջ, «թէպէտ տեղ տեղ ցանկալի էր այլ կերպ անել այդ գլխակարգութիւնը» (էջ 227):

«Մեծապէս գովութեան արժանի» է համարել սուրբգրական վկայութիւնների նշանակուած լինելը թէ՛ առ տեղեան եւ թէ՛ առանձին ցանկով (էջ 227), բայց ափսոսում է, որ նշուած են միայն «բուն կոչմունքն», իսկ որպէս «խօսողի սեպհական խօսքեր» բերուած տեղերն արձանագրուած չեն. ցանկալի է համարում նաեւ այդպիսիների նշումը, որովհետեւ թէկուզ դրանք «բառական կոչմունք չեն, միշտ մեծ ծառայութիւն կրնան մատու-

¹⁰ Այդուիանդերձ, որոշ ծոյլ տպագրիչներ, բնագրերի տողերը համարակալելով հանդերձ, ընթերցումները երբեմն տարել են բնագրի բաժինների կամ ամբողջ գրքի վերջ. այսպիսի դէպքերում ընթերցումների տպագրումը լիովին ինքնանպատակ եւ անիմաստ է դառնում, որովհետեւ որեւէ մէկը գրքի երկու տարբեր տեղերի՝ բնագրի եւ ընթերցումների էջեր միաժամանակ կարողալ չի կարող:

¹¹ Հ. Յ. Տաշեան, Մատենախօսական. Պատմագիրք Հայոց. Ղ. Փարպեցի, «Հանդէս ամսօրեայ», 1904, թ. Թ.-Ժ., էջ 225-234. այստեղից յաջորդաբար արուած քաղուածքների էջախամարները փակագծուած նշել ենք վերը՝ շարադրանքի մէջ:

ցանել Ս. Գրոց Հնագոյն բնագրի Համեմատական քննութեան եւ այն կարգի խնդրոց համար» (էջ 228):

Յանկալի է համարում, որ գրքի մէջ լինէր բառացանկ «այն բառերու եւ բառաձեւերու՝ որոնք միայն Փարպեցոյ սեպհական են կամ գոնէ նախ իւր գրքէն ծանօթ» - ամէնաշատը 1-2 էջ բռնելիք այդ ցուցակը «լեզուական եւ յարակից բանասիրական խնդրոց համար անգնահատելի կ'ըլլար: Ասիկա իմանալու է բովանդակ մատենագրութեան համար» (էջ 228): Այս առաջարկը պէտք է ուժի մէջ համարել բոլոր ժամանակներում, նաեւ՝ ներկայումս, այսինքն՝ արժէ որ այս կէտը իրաւացի պահանջ համարուի ընդհանրապէս որեւէ տեսակի միջնադարեան սկզբնաղբիւրի որեւէ նոր հրատարակութեան համար¹²:

Փարպեցու Թղթի՝ Յ. Շահխաթունեանցի եւ Մսեր Մսերեանի անխնամ եւ անփոյթ օրինակութիւնների հիման վրայ էմինի արած հրատարակութեան (Մոսկուա, 1853) առիթով ասում է. «Այս ալ (Էի հետ) լաւ օրինակ մըն է ցուցնելու թէ ինչ վիճակի մէջ են յաճախ մեր նախնեաց բնագրաց հրատարակութիւնքն, որ բանասիրական ճշգրտութեամբ չեն կատարուած» (էջ 230-1)¹³: Բաւական երկարօրէն եւ բազմատեսակ փաստարկներով պնդում է, որ պարտաւոր էին համեմատել նաեւ Է՝ ՄՄ Հ^ր 1891 ձեռագիրը, որովհետեւ նրանից են ծագում Վենետիկի տպագիրները (էջ 232), որոնց շատ ընթերցումներ պէտք է բացատրելի դառնային այս ձեռագրի ձեւերով¹⁴:

Տաշեանն իրաւացիօրէն համաձայն չէր «Պատմագիրք Հայոց»ի համար ընդունուած՝ բնագրերն առանց ծանօթագրութիւնների հրատարակելու սկզբունքին (էջ 226), քննարկել է նաեւ ուղղագրական կարեւոր խնդիրներ (առանձնապէս դէմ է ոսկեդարեան բնագրերում «օ»¹⁵, «և» գրեր գործածելուն եւ այլն՝ էջ 232-3), ի վերջոյ՝ ընդհանրապէս բնագրագիտական մեծ կարեւորութիւն ունեցող իր մատենախօսութիւնը եզրափակում է այսպէս.

¹² Միայն թէ պէտք է յիշել, որ հին-նոր լինելը որոշելու հիմնական չափանիշը մնում է «Նոր հայկագեան բառարանը», որ բառագործածութեան վկայութիւններ ունի, այդ դերը լիարժէք չի կարող կատարել աւելի մեծ բառացանկ ունեցող, սակայն գոտ բացատրական բնոյթի նոր բառարանը՝ Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի բառարան, Անթիլիաս - Լիբանան, 2004 (1330 էջ):

¹³ Շուտով տեսնելու ենք, որ սա վերաբերում է մեր պատմագրքերի «գիտական» բոլոր հին հրատարակութիւններին:

¹⁴ Տաշեանը նաեւ ի միջի այլոց արձանագրել է. «Ծանօթութեանց կարգին մէջ իւրաքանչիւր տեղը զետեղուած են նաեւ ձեռագրաց յիշատակարանք» (էջ 228). սա սխալ վարմունք է, որովհետեւ այդպիսիք սկզբնաղբիւրի բնագրի մասեր չեն, այսինքն՝ գրչական մանր ու մեծ յիշատակարանները նախընտրելի է մէջբերել առաջաբանում՝ ձեռագրերի ըստ պատշաճի անելիք նկարագրութիւնների մէջ:

¹⁵ «Միակ մայր»՝ ՄՄ Հ^ր 2639 ձեռագիրն ունի միայն «աւ», իսկ տպագրում կայ միայն «օ»:

«Շատանանք անով, որ այժմ գոնէ ունինք հրատարակութիւն մ' որ ներկայ ձեռագրական աւանդութիւնը լիովին մեր առջեւ կը դնէ» (էջ 234):

Փորձով գիտենք, որ մեր պատմագրքերի հին հրատարակութիւններն այնքան էլ ճշգրիտ չեն, ուստի արեւ ենք բնագրի մի հատուածի՝ տպագրի եւ ձեռագրի փորձնական համեմատութիւն, որի արդիւնքն այստեղ բերելով, համոզուեմ ենք, որ Տաշեանի լաւատեսական ամփոփումը ճշմարտութիւնից մի փոքր հեռու է:

Համեմատութիւն տպագրի¹⁶ եւ «միակ մայր» ձեռագրի.

Տպագիր. էջ/տող, ընթերցում		Ձև. Հ ^ր 2639. էջ, ընթերցում	
1/3	պատմութեանն	364ա	պատմութեան
1/4	սկսեալ	364ա	> (չիք) սկսեալ
1/5ծ.	յորդոյ	364ա	որդոյ
2/13	յրնկերակցաց	364բ	րնկերակցաց
2/25	ստուգարան	365ա	րստուգարան
2/26	ի պատմութիւնս	365ա	պատմութիւնս (> ի)
2/27	արշակունոյն	365ա	արշակունոյն
2/29	գրինախնդրութիւնս	365ա	գրինախնդրութիւն
2/30	գտողի	365ա	գտողի
2/32	ի նմանէ	365ա	ի նմանէն
2/34	թագաւորութեան	365ա	թագաւորութեանն
3/12	նահատակին	365ա	նահատակինն

Տեսանելի է, որ պատկերն այնքան էլ աւաղելի չէ, բայց նաեւ ճշգրտութիւնից հեռու է. ենթադրելի է, որ եթէ մի փոքր հատուածում այսքան տարբերութիւն կայ, ապա ուրքա՛ն պէտք է լինի ամբողջի մէջ: Սրա պատճառներից մէկն էլ երեւի այն է, որ Մալխասեանցը հաղորդել է որպէս աշխատանքի ընթացքին վերաբերող մի «երկրորդական» թուալիք մանրամասն. «Պատմութեան եւ Թղթի Ա. տպագիրը Զ.ի (իմա՛ Հ^ր 2639ի - Գ. Տ-Վ.) հետ բաղդատել ենք Գ. Տէր-Մկրտչեանն ու ես: Իսկ երկրորդ եւ երրորդ տպագրութիւնների հետ բաղդատութիւնը կատարել ենք իմ երեք աշակերտի - Սարգ. Եսայեանի, Կար. Միրիանեանի եւ Արտ. Յովհաննիսեանի օգնութեամբ» (էջ Ժ.): Նկատենք, որ մեր բանասիրական առօրեայի մէջ բնագրական համեմատութիւնը գրեթէ միշտ, լիովին անիրաւացիօրէն,

¹⁶ Համեմատուած մատու տպագիրն ունի յիշեալ Ա.-Ճ. հատուածահամարների Ա.-Գ. միաւորները, որ նուագրում, բնականաբար, չկան:

Համարուել է որակաւորում չունեցող մարդու՝ աշակերտի անելիք աշխատանք¹⁷, եւ սա այդ սխալ մտայնութեան դրսեւորումներից մէկն է¹⁸:

Այս առիթով նկատենք, որ գիտական կամ Համեմատական Հրատարակութիւնների մէջ ընթերցումների ընտրութեան իրաւացիութիւնը պակաս կարեւոր է, քան ձեռագրերի եւ տպագիրների ընթերցումների ճշգրիտ արձանագրումը, անսխալ խմբաւորումը եւ դիւրընկալելի ձեւերով ներկայացնելը (այս յատկանիշների շնորհիւ են բնագրերը կազմուած լինում լաւ եւ վստահութեամբ գործածելի կամ վատ եւ անվստահելի). որովհետեւ վատ ընտրութեան դէպքում հետագայում որեւէ ուսումնասիրող կարող է սրբագրել սխալները, իսկ հակառակ դէպքում որեւէ մէկը պէտք է երբեւէ կրկնի բնագրի ձեռագիր եւ տպագիր օրինակների Համեմատութեան տաժանակիր եւ ծանր աշխատանքը: Սակայն այստեսակ տաժանքը կրկնելու ճանապարհն էլ հոգեբանօրէն փակում է այն հանգամանքը, որ տողատակի տարընթերցումներ ունեցող «գիտական» Հրատարակութիւն արդէն գոյութիւն է ունենում, եթէ անգամ ենթագրելի է լինում, որ այն կարող է սխալաշատ լինել, կրկին՝ անելիքի ծանրութեան հեռանկարը մեծապէս խանգարում է գործը վերստին անելուն:

Միով բանիւ, յաջորդ տարի՝ 1905 թ., Վենետիկից եղաւ Փարպեցու բնագրի չորրորդ տպագրութեան երկրորդ արձագանգը, որի հեղինակ Բարսեղ վ. Սարգիսեանն իր գրուածքի սկզբում իսկ յայտարարեց. «Մերը շարունակութիւն եւ լրացուցիչ պէտք է լինի Վեր. Հ. Յ. Տաշեանի տեսութեան, եւ ծառայէ Ղազարայ տպագրութեանց եւ գրչագրաց մասին եղած միութիւնները փարատելու»¹⁹, ըստ այսմ եւ ինչ որ հափով որոշակիացրեց Փարպեցու վենետիկեան ձեռագրերի մասին Գ. Տէր-Մկրտչեանի մօտաւոր գնահատականները:

¹⁷ Հմմտ., օրինակ, Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Յառաջարանով, համեմատութեամբ յաւելուածներով եւ ծանօթութիւններով՝ Արշակ Տէր-Միքելեան, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 1893 (այսուհետեւ՝ Սամուէլ Անեցի, 1893), էջ ԻԸ. ծնթ. «Համեմատութեան ժամանակ օգնեցին ինձ Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի Ա. յարանի ուսանողներից պպ. Մ. Յարութիւնեան, Ա. Աւագեան, Ս. Մազմանեան, Ս. Տէր Մելքոնեան, Ե. Սովակեան, Մ. Եղեկեան, Լ. Ճարակեան եւլն»: Յատկանշական է, որ թէ՛ Մալխասեանցի եւ թէ՛ Տէր-Միքելեանի թուարկած մարդիկ հետագայում երբեւէ գիտական, առաւել եւս՝ քննարկական աշխատանք չեն արել:

¹⁸ Կան նաեւ բնագրի եւ ընթերցումների անհամապատասխանութիւն-անճշտութեան այլ պատճառներ, որոնց մասին վերելում արդէն գրել ենք:

¹⁹ Բարսեղ վ. Սարգիսեան, Երկու խօսք Ղ. Փարպեցու նոր տպագրութեան առթիւ, «Բազմավէպ», 1905, թ. Բ., էջ 52-3 (ամբողջը՝ Բ., էջ 52-62, Գ., էջ 129-133. այսուհետեւ՝ շարադրանքի մէջ յիշելու ենք միայն էջահամարը, իսկ տողատակին՝ «Բազմավէպ», 1905): Փարպեցու վենետիկեան ձեռագրերի մանրամասները՝ մի փոքր յետոյ:

Նախ, Յ. Տաշեանին կրկնելով, սխալ է համարել *Է՝ ՄՄ Հ^ր 1891 ձեռագիրը* չհամեմատելը եւ յայտարարել է, թէ փոխարէնը ուսումնասիրողներին ինքնին մատչելի «վենետիկեան տպագրութեանց տարբերութիւններով խճողած» են Փարպեցու 1904ի տպագիրը, «տարբերութիւններ՝ որոնց նորամուտ կամ հին ըլլալու մասին իրենք իսկ որոշ գաղափար կազմած չեն»։ մինչդեռ եթէ սրանց փոխարէն համեմատէին *Է* կոչուած «ձեռագիրն ամբողջովին, եւ կամ գէթ *Բ*-էն ունեցած տարբերութիւնքն ի ստորեւ դրած ըլլային, անով աւելի հեշտեալ պէտք է պարզուէին գուցէ ոչ թէ միայն *Տ. Գէորգի* (իմա՝ վենետիկեան - *Գ. Տ-Վ.*) գրչագիրներուն, այլ նոյն իսկ անոնց երբեմն իբր բնագիր ծառայող ձեռագրաց վերաբերեալ մթութիւնքը» (էջ 58)։

«Խստապահանջ» ուսումնասիրողի համար անբաւարար է համարում հրատարակիչները պնդումը, թէ «*Է*-ն մի բաւական անխնամ ընդօրինակութիւն է *Բ*-ից... Եւ ի՞նչպէս (ընթերցողը - *Գ. Տ-Վ.*) բաւականանայ, երբ բաղդատելով *Բ*-էն եղած նոր հրատարակութիւնը՝ *Տ. Գէորգի* գրչագիրներուն հետ, պիտի տեսնէ շատ կարեւոր տարբերութիւններ, որոնք եթէ ըստ կամս ընդօրինակողին ներմուծուած չեն - եւ բանաւոր պատճառ մի չկայ՝ այդպէս վարուելու ձեռագրի մը հետ, որ առաջին անգամ դեռ կը ծանօթանար - բոլորովին հակառակը կը հաստատեն յիշեալ յայտարարութեան» (էջ 58-9)։ Եւ Վենետիկի առաջին եւ երկրորդ տպագիրները ԱԲՏ նշանով, իսկ *Գէորգ Դպիր Պոլսեցու* օրինակները *ԳԳ* համառօտմամբ համեմատել է նոր տպագրի հետ ու արձանագրել հարիւրաւոր տարբերութիւններ, որոնց հիման վրայ յայտարարում է, թէ 1904ի տպագրի հիմք *Բ* (*ՄՄ Հ^ր 2639 - Գ. Տ-Վ.*) ձեռագրի մէջ «ոչ միայն յաճախ զանց եղած են նախդիրներ եւ նախադրութիւններ, այլ բազմաթիւ բառեր եւս սխալ գրուած են եւ այլանդակուած, ինչպէս եւ երբեմն երբեմն նախադասութիւնները յաւելմամբ ու յապաւմամբ յեղափոխուած են. մինչդեռ *ԳԳ*. այսպիսի աղաւաղութիւններէ ընդհանրապէս ազատ են»։ Աւելին՝ *Բ* ձեռագրում քերուած եւ սրբագրուած բոլոր բառերը «*ԳԳ* միահետ կը գրեն տողամիջում», նաեւ՝ տպագիրների լաւագոյն ընթերցուածները բխում են այս *ԳԳ* ձեռագրերից (էջ 59)։

Այսինքն՝ *Գէորգ Դպիր* ձեռագրերն²⁰ օրինակուել են *Բ* կոչուած ձեռագրի հետ կապ չունեցող հիմքերից։ Ապա Բ. վ. Սարգիսեանը մանրատառ ներկայացնում է վենետիկեան եւ 1904ի տպագիրների համեմատ

²⁰ Տիդիսի 1904ի տպագրի համեմատ այդ ձեռագրերի ունեցած տարբերութիւնների մի մեծ շարք տնէս «Բազմավէպ», 1905, էջ 58 ծնր.։

Գէորգ Դպրի ձեռագրերի ունեցած բոլոր տարբերությունները (էջ 59-61), որոնցով վերահաստատում է իր եզրակացությունը, թէ պետք է «ԳԳ. Բ-էն անկախ ձեռագրերէ ընդօրինակուած ըլլան» (էջ 61):

Յօդուածի երկրորդ մասում քննել է գրերի գիւտին վերաբերող՝ Գ. Տէր-Մկրտչեանի պարզած՝ Խորենացու 1695ի տպագրից առնուած յետսմուտ հատուածի խնդիրը, ապա վիճարկել է Փարպեցու Պատմութեան Առաջաբանի հատուածների վերադասաւորութիւնը, որ 1904ի տպագրի մէջ արել են հետեւելով Ն. Բիւզանդացու առաջարկին, եւ կէտ առ կէտ հիմնաւորում ու նախընտրելի է համարում Վենետիկի 1891ի Գ. տպագրութեան մէջ արուած՝ նոյն Առաջաբանի վերադասաւորութիւնը (էջ 129-133): Այս դատողութիւնները նոյնպէս անպայման նկատառելի են Փարպեցու երկի ապագայ հրատարակութեան ժամանակ:

Վերն ասացինք, որ Բ. վ. Սարգիսեանը որոշակիացրել է Փարպեցու վենետիկեան ձեռագրերի մասին տեղեկութիւնները, աւելացնենք, որ աւելի նորերս Սահակ վ. Ճեմճեմեանը հրապարակեց նախ՝ նոյն ձեռագրերի ստացմանը վերաբերող փաստաթղթեր, ապա՝ նրանց մանրամասն նկարագրութիւնները. երկուսի հաղորդումները միահիւսելով, ըստ Բ. վ. Սարգիսեանի թուարկման կարգի՝ պատկերենք այդ ձեռագրերի՝ մեր խնդրի համար կարեւոր կէտերը.

Ա. Վենետիկի Մխիթ. մատենադարանի ձեռ. Հ^{մբ} 1206/929.²¹ Պատմագիրք Հայոց ԾԸ., ՌՄԼԱ. - 1782 թ. փետրուար, տեղի՝ Տարօն, գրիչ՝ Գէորգ Դպրի Պալատեցի, 498 էջ, թուղթ, 15,6x11. միասիւն, նոտրգիր, 21 տող. - էջ 1-488 Պատմութիւն Ղազարայ Փարպեցույ (Թուղթը չկայ): «Տեղեկութիւնք՝ Տիրացու Գէորգ Պալատեցի նուիրած է Ս. Ղազարու վանքին, 1783ին»²²: Ձեռագրի մէջ կայ հետեւեալը. «Պատմագիրքս Ղազարու Փարպեցույ եղեւ գրեցեալ ի ՌՄԼԱ. թուականին, ի փետրվարի սկսեալ եւ աւարտեալ, աշխատութեամբ Գէորգայ Կոստանդինուպօլսեցույ» (էջ 488),

²¹ Վենետիկի Մխիթարեան ձեռագրացոյցակը կազմում է սիւթի կարգով, ուստի եւ սովորական գոյքահամարներից բացի ունի նաեւ ցուցակի համարներ, որ մենք նշանակում ենք առաջինից յետոյ՝ երկուսի միջեւ միշտ դնելով թեք գիծ՝ /, այսինքն՝ այս 1206/929ի առաջինը գոյքահամարն է, երկրորդը՝ ցուցակի համարը:

²² Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Զ., Պատմագիրք Հայոց - Կանոնագիրք, Գրիգոր Նարեկացի - Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի - Աղօթագիրք, Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթ. տպ., 1996, էջ 235-8 (այսուհետեւ՝ «Վենետիկի ցուցակ», Զ.), հմմտ. «Բազմավէպ», 1905, էջ 54:

որից յետոյ Մ. վ. Աւգերեանը²³ գրել է. «Տիրացու Գէորգն Տէր Յովհաննիսեան ի ճանապարհորդութեանն յամին 1782, ի վանս ինչ Տարօնոյ օրինակեալ զՂազարու Պատմութիւնն ի հին մատենէ, որ գրեալ էր ի կղզին Աղթամար, առաքեաց ընդ այլ գրեանս ի վանս Սրբոյն Ղազարու, յամին 1783» (էջ 489). նոյն Մ. վ. Աւգերեանը գրեթէ նոյնը գրել է նաեւ վանքի գրացուցակի մէջ²⁴: Պալատեցին «Ձեռագրին կը հանդիպի էջմիածնի մէջ, ուր կ'օրինակէ վանականի մը միջնորդութեամբ», ապա 1783 թ. նոյեմբերի 20ին իր օրինակութիւնը Ս. Ղազար է ուղարկել՝ նամակով հանդերձ, որով ինքըն է ձեռագիրը գաղտնի պահել, նրանից որեւէ բան չհրապարակել, որովհետեւ գաղափար օրինակն իրեն տրամադրող մարդը եկել է Պոլիս եւ պահանջում է տպագրել այն²⁵. ապա յաջորդ՝ 1784 տարուայ մայիսի 27ի մի այլ նամակով Մխիթարեաններին յայտնել է, որ այլեւս վտանգ չկայ, ուստի եւ Փարպեցու Պատմութիւնն արդէն կարող են տպագրել²⁶:

Բ. Վենետիկի Մխիթ. մատենադարանի ձեռ. Հ^մ 1088/927. Պատմագիրք Հայոց ԾԶ., էջմիածին, 1781 թ. մարտ ամիս, գրիչ՝ Գէորգ Դպիր Պալատեցի. 247 թերթ, թուղթ, 17x11,5. միասիւն, նոտրգիր, 23 տող: - 1ա-223ա Պատմութիւն Ղազարայ Փարպեցու, 224ա-247բ Կորիւն, Վարք Մաշտոցի: - Յիշ. գրչի. 223ա «Գրեցաւ Ղազարու Պատմագիրքս յԱրարատեան դաշտի, ի հրեշտակացոյց սուրբ Կաթողիկէին, ի թուականութեան մերում ՌՄԼ. (1781), ի Մարտ ամսեան, գրչութեամբ Գէորգայ նուաստի Կոստանդինուպոլսեցույ». նման՝ 247բ (Կորիւնի վերջում): «Տեղեկութիւնք՝ Գէորգ Պալատեցի Տէր Յովհաննիսեան, Ձեռագրին գրիչը, նուիրած է Ս. Ղազարի մատենադարանին»²⁷. բայց աւելի ճիշտ՝ «չատ տարիներ վերջ Հ. Արսէն Բագրատունի բերած է Վենետիկ, ըստ որում նշանակուած է մեր Ձեռագրատան ցանկին մէջ»²⁸, ի վերջոյ՝ «Գէորգ Պալատեցի ունէր (Փարպեցու Պատմութեան - Գ. Տ-Վ.) նաեւ իր անձնական օրինակը, իր

²³ Ասմ, ըստ Բ. վ. Սարգիսեանի՝ «Հ. Ղուկաս Ինճիճեան թէ ուրիշ մէկն, յայտնի չէ», «Բագմավէպ», 1905, էջ 56:

²⁴ Հ. Սահակ Զեմնեման, Գէորգ Դպիր Տէր-Յովհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները, Վենետիկ, 1984, էջ 16-7 («Հայագիտական մատենաշար «Բագմավէպ», թիւ 21». այսուհետեւ՝ Զեմնեման, Գէորգ Դպիր):

²⁵ Ասմ, էջ 94. Գէորգ դպրի՝ 1783 թ. նոյ. 20ի առ Ս. վ. Ագոնց նամակից. «Դարձեալ եւ զայլ բան աղաչել կամիմ եւ յերես անկեալ աղերսեմ, զի զանուն Պատմական գրոցն Ղազարու Փարպեցոյն զամս բազումս մի՛ ի դուրս հանիցէք՝ թէ ունիք, եւ մի՛ ի նմանէ բանս ի զիր վաղվադակի արձանացուցանէք»: Այստեղ բաւական տարօրինակ է, որ «ի վանս ինչ Տարօնոյ օրինակեալ» ձեռագրին յանկարծ «կը հանդիպի էջմիածնի մէջ»:

²⁶ Ասմ, էջ 16:

²⁷ Տե՛ս «Վենետիկի ցուցակ», Զ., էջ 233-4. հմմտ. «Բագմավէպ», 1905, էջ 54:

²⁸ «Բագմավէպ», 1905, էջ 55:

գործածութեան համար, որ Պալատեցիի մահէն տարիներ ետք, Հ. Արսէն Բագրատունիի ձեռքով, Պոլիսէն կը մտնէ Ս. Ղազարի մատենադարանը (ձեռ. թիւ 1088), չենք գիտեր թէ ո՞ր տարին»²⁹:

Պալատեցու՝ 1781-1782 թթ. 14 ամսեայ ուղեւորութեան մասին պատմող՝ 1782 թ. օգ. 15ին Պոլսից Վենետիկ՝ Ստեփանոս վ. Ագոնցին ուղղած նրա նամակի հիման վրայ Ս. վ. Ծեմճեմեանը պատմում է. «Անցած է Սանահին ու Հաղբատ... Ապա անցնելով Այրարատեան գաւառը՝ կը մտնէ Տարօն, կը գտնէ անգիւտ գանձ մը՝ «Գիրք Պատմութեան Ղազարու Փարպեցույ ճարտասանի», եւ այս գիւտին առթած բերկրանքով կը մոռնայ ճամփորդութեան բոլոր յոգնութիւնները»³⁰: Իսկ Գէորգ Դպրի պատմածն այս է. «Եւ ես ուղիղ գծիւ մինչեւ ի ծայրս սահմանացն Հայոց գնացեալ, հասի ի Հաղբատ եւ ի Սանահին, եւ գտի ի Հաղբատ զոմանս գիրս... Ապա չոքայ յԱրարատեան գաւառ, եւ անտի ի սահմանս Տարօնոյ ի վանս ինչ երթեալ՝ գտի անտանօր մի մատեան հին եւ ոչ ուրեք գտանելի, որ գրեցեալ էր ի կղզին Աղթամար, եւ էր գիրք պատմութեան Ղազարու Փարպեցույ ճարտասանի, զորոյ թէպէտ զանունն լուեալ էի ի պատմական գիրս՝ բայց զինքն ոչ երբեք տեսեալ. եւ ոչ ես միայն, այլ նաեւ բազումք. զոր Աստուած յանակնկալ տեղւոյն ինձ ի յայտ ածեալ, գրել եւ ստանալ ետ...»³¹: Այսպիսով, ըստ յիշեալ նամակի՝ Գէորգ Դպիրը Պոլսից գնացել է Հաղբատ, ապա՝ Սանահին, յետոյ՝ Արարատեան գաւառ (նաեւ՝ Էջմիածին), այնտեղից՝ Տարօն. 1781 թ. մարտ ամսին Էջմիածնում գրել է Բ. Հ^մ 1088 ձեռագիրը, որ ունի Փարպեցու Պատմութիւնը՝ թղթով եւ Կորիւնով հանդերձ (ինչ որ կայ նաեւ ՄՄ Հ^մ 2639ում). այս ձեռագիրը պահել է իրեն՝ որպէս «անձնական» օրինակ, իսկ 1782 թ. փետրուարին Տարօնում օրինակել է Ա. Հ^մ 1206 ձեռագիրը, որ ունի միայն Փարպեցու Պատմութիւնը (Թուղթը չունի) եւ 1783ին նուիրել է Մխիթ. միաբանութեանը:

Ըստ այսմ՝ տարօրինակ է, որ Փարպեցու Պատմութիւնն Էջմիածնում արդէն տեսել եւ պատճէնել էր, բայց Ս. Ագոնցին պատմում էր Տարօնում տեսած եւ օրինակած լինելու մասին: Գուցէ պատճառն այն է, որ Էջմիածնում գրած Բ. օրինակը պահել էր իրե^ն. Բայց նամակում կայ նաեւ Փարպեցու երկը նկարագրող մի ընդարձակ պարբերութիւն, որի աւարտը վստահաբար վերաբերում է թղթին (որ Վենետիկ ուղարկած օրինակում չկար). «Հասուցեալ ի մարզպանութիւնն Վահանայ Մամիկոնոյ, եւ ի հայ-

²⁹ Հ. Սահակ Ծեմճեմեան, Գէորգ Դպիր, էջ 17:

³⁰ Անդ, էջ 12:

³¹ Անդ, էջ 91. այստեղ՝ էջ 90-93՝ Պալատեցու 1782 թ. օգ. 15ի նամակի ամբողջական քննադիրն է:

րապետութեան Յոհաննու Մանդակունուոյ, եւ գրեալ եւս զմի Ատենաբանութիւն նորին, որ առ ժողովուրդն, ի վերջն գրքոյն, փակէ զգրութիւն մատենին իւրոյ»³²:

Ըստ Բ. Վ. Սարգիսեանի՝ «Գէորգայ Վենետիկում գտնուող Ա. եւ Բ. գրչագրերը բուն Գէորգայ ձեռքով իրարու հետ բաղդատուած են եւ փոխադարձաբար իրարմէ սրբագրուած. այսինքն՝ նշանախեցներով փոխն ի փոխ մէկուն բաց թողած բառերը՝ միւսէն լրացուած լուսանցքներուն վրայ - ի բաց առեալ E-ի նախագրան վերնագիրը «Պատմութիւն Ղազարու» եւ այլն, որ Գէորգայ Բ. օրինակին մէջ ի սկզբանէ չկար եւ ոչ ալ յետոյ լրացուած է»։ Ապա եզրակացնում է, որ Ա. ձեռագիրը գուցէ Մ. Վ. Չամչեանի համար Պոլսում օրինակուել է Բ. ձեռագրից, «եւ կամ լաւ եւս՝ երկուքն ալ իրարմէ տարբեր գրչագրերէ ընդօրինակուած են»³³, յետոյ ենթադրում է, որ B ձեռագրի սրբագրութիւններն արուել են համեմատելով Բաղէշում եղած մի «կատարեալ օրինակ»ի հետ, որ, հաւանաբար, հէնց E ձեռագրի յիշատակարանի ակնարկած «սրբագիր» օրինակն էր (ուրեմն՝ այդ «սրբագիր»ը B-ն լինել չէր կարող) եւ նրանից էլ պէտք է օրինակուած լինեն թէ՛ նոյն E ձեռագիրը եւ թէ՛ Գէորգ Դպրի ձեռագրերը³⁴:

Գ. Վենետիկի Մխիթ. մատենադարանի ձեռ. Հ^մ 129/297. Հաւաքումն բանից նախնեաց. 1784-1790 թթ., տեղի՝ Վենետիկ, «իսկ բնագիրն՝ Հաղբատ կամ Պոլիս» (աւելի ճիշտ՝ Տարօն), գրիչը՝ «Վարժարանեայք Թ. դասուն Մխիթ. ուխտիս, իսկ հնոյն՝ Գէորգ Կոստանդնուպոլսեցի», 191 թերթ, թուղթ, 24x14 (18x14), միասիւն, նոտրգիր (տարբեր ձեռքերի), 26 տող։ - 6ա-19բ Կորիւն, 21ա-156ա «Պատմագրութիւն Ղազարայ Փարպեցւոյ»։ 156բ «Պատմագիրքս Ղազարու Փարպեցւոյ եղեւ գրեցեալ (իմա՝ օրինակեալ) ի ՌՄԼԱ. թուականին, ի փետրվարի սկսեալ եւ աւարտեալ աշխատութեամբ Գէորգայ Կոստանդնուպոլսեցւոյ». «ասոր անմիջապէս կը յարի վերջին ընդօրինակողէն. «Ի ձեռագրէ տիրացու Գէորգայ՝ զոր գրեալ էր ի գաղափարէ գրելոյ ի վանս Հաղբատու, օրինակեցաւ այս պատմագիր Ղազարու Փարպեցւոյ ի վանս Սրբոյն Ղազարու ի Վենետիկ, յամի Տեառն 1784, յամսեանն յունիսի»։ Ըստ Բ. Սարգիսեանի՝ սա 1793ի տպագրի հիմքն է, որովհետեւ վրան կայ Մխիթ. միաբանութեան այն ժա-

³² Անդ, էջ 91:

³³ «Բագմավէպ», 1905, էջ 57-8:

³⁴ Այս բոլորը, անշուշտ, վարկածներ են, որոնք կարող են ճշգրտուել միայն խնդրոյ առարկայ ձեռագրերը մանրամասն համեմատելով. նկատենք, որ, ի տարբերութիւն Յ. Վ. Տաշեանի բարեմիտ մատենախօսականի, Բ. Վ. Սարիգսեանի յօդուածը գրուած է մի տեսակ խանդով եւ հակառակութեան ոգով, որ գիտութեան մէջ յաճախ սխալ տեղ է տանում:

մանակի գրաքննիչ Ստ. Մելգոնեան Աբբաժօր իտալերէն մակագրութիւնը. բնագիրը բաժանուած է փակագծուած՝ «Գիրք Ա. ... Գիրք Ե.» մասերի, բայց տպագիր»ն ունի «Դրուակ Ա. ... Դրուակ Գ.», «Բնագիրս առանց ինչ գլխահամարի է, հետեւաբար Բ. տպագրութեան մէջ հրատարակէն դրուած են անոնք... Սակայն պէտք եմ ըսել եւ այս, որ այդպիսիք իսկ Ղազարայ բնագրէն մակաբերուած են, եւ ոչ թէ ըստ քմաց»³⁵: Փարպեցու մասը օրինակուած է 1206/929 Ա. ձեռագրից, «վասն զի 1784ին այդ օրինակը միայն կը գտնուէր ի Ս. Ղազար»³⁶:

Դ. Վենետիկի Մխիթ. մատենադարանի ձեռ. Հ^{մր} 2183/872. Պատմագիրք Հայոց Ա., ԺԱ-ԺԲ. դդ., 12,8x8 սմ չափսի մագաղաթէ 8 թերթ, միջին (ուղղագիր) երկաթագիր. «կազմուած է ձեռագրէ մը հանուած պահպանակի ութը միասին թուղթերով, եզերքի լուսանցքներէն կտրուած երկու կամ աւելի տառեր: Համապատասխանում է Ղազար Փարպեցու Պատմութեան Տիխիսի 1904ի տպագրի էջ 48ի տող 26ից մինչեւ էջ 49ի տող 14 (48₂₆-49₁₄), ապա՝ էջ 53ի տող 40ից մինչեւ էջ 54ի տող 30 (53₄₀-54₃₀)»³⁷:

Ընդհանրապէս պատառիկ-պահպանակներն իրենց բնկալ (իրենց ընդունած) ձեռագրից անջատելը սխալ է, որովհետեւ նախ՝ մի քանի դար այդ երկուսը միասին են եղել եւ միասնական կենսագրութիւն ունեցել. պահպանակները յաճախ օժտուել են բնկալ ձեռագրերին վերաբերող գրառումներով, երկրորդ՝ անջատելուց յետոյ անհնար է լինում անգամ ենթադրելը, թէ որտե՞ղ է պահպանակի՝ հնացած եւ անգործածելի դարձած մայր ձեռագիրը մասնատուել եւ դարձել կազմարարի գործածելիք նիւթ եւ այլն: Ըստ Բ. վ. Սարգիսեանի՝ այս «Պատմագիրք Հայոց Ա.»ն որպէս պահպանակ-թերթեր եղել է նոյն մատենադարանի «Յիսուս որդի ԺԲ.» ձեռագրի՝ մէջ. բարեբախտաբար կարողացանք պարզել, որ այն նոյն մատենադարանի Հ^{մր} 928/1077 ձեռագիրն է³⁹, որ կրկին՝ բարեբախտաբար,

³⁵ Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. երկրորդ, յօրինեց Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, ի Վենետիկ, Մխիթ. տպ., 1924, Բ., էջ 1081-3 (ամբողջը՝ 1081-90. այսուհետեւ՝ Վենետիկի ցուցակ, Բ.), հմմտ. «Բազմավէպ», 1905, էջ 54-5. էջ 55՝ «1793ի առաջին տպագրի «ճակատն, ինչպէս նաեւ լուսանցքներում եղած նիւթոց վերնագիրները - ի բաց առեալ մի քանիսը - Նախկերգանք բառէն սկսեալ մինչեւ վերջին գլուխը տպագրութեան ժամանակ յաւելցուած ըլլալու են, զի պատրաստուած քնագրին (այն է Գ. օրինակին) մէջ չկան»:

³⁶ «Բազմավէպ», 1905, էջ 55:

³⁷ Տե՛ս «Վենետիկի ցուցակ», Զ., էջ 1-4. հմմտ. «Բազմավէպ», 1905, էջ 61. այս պատառիկի ընթերցման տողերի համեմատութիւնը 1904ի տպագրի հետ տես «Բազմավէպ», 1905, էջ 61-62. արձանագրել է 24 միասոր տարբերութիւն:

³⁸ Տե՛ս «Բազմավէպ», 1905, էջ 61:

³⁹ Տե՛ս Մկրտիչ վ. Ազեքեան, Մատենական ցանկ ձեռագրաց հայոց՝ եղելոց ի գրատան

նկարագրուած է⁴⁰ եւ հետեւեալն է. 230 թերթ, 12,5x9 սմ, ՊՂ. - 1441 թ., Արճէշ, գրիչ՝ Յովհաննէս քհն. Մանգասարենց, ստացող՝ Վարդան վարպետ: Այսինքն՝ ԺԱ-ԺԲ. դարերով թուագրուած պատառիկի մայր ձեռագիրը մասնատուել է 1441 թ., Արճէշում. իսկ սա նշանակում է, որ ապագայում Փարպեցու նոր բնագիր պատրաստողն այս ուղենիչն անպայման պէտք է նկատի ունենայ եւ այդ մայր ձեռագրի այլ մաս-թերթեր փնտրի նոյն Արճէշում շուրջ 1430-1460 թթ. ընթացքում գրուած ձեռագրերի պատառիկ-պահպանակ թերթերի մէջ:

«Լրութեան համար» այստեղ նշենք նաեւ մեր խնդրին վերաբերող՝ Փարպեցու Պատմութեան Փարիզի մէկ ձեռագրի գոյութեան փաստը.

Ե. Ֆրանսիայի ազգային գրադարանի Հայ. ձեռ. Հ^{մբ} 205. Հայոց Պատմութիւն Ղազարայ Փարպեցու, 1787 թ., Վենետիկ, Ս. Ղազար, գրիչ՝ Պետրոս Սիմոն Լոււտեան (*Pierre-Simon Lourdet*), ստացող՝ Ֆրանսիայի արքայական գրադարան. 546 էջ, թուղթ, 26,5x21. միասին, նոսրագիր, 17 տող. էջ Ը. «Պատմութիւն Ղազարու Փարպեցու, գրեալ ի վանս միանձանց Հայոց Մխիթարեանց, ի կղզին Սրբոյն Ղազարու, ի Վենետիկ, ի թուակահիւս Հայոց ՌՄԼԶ., իսկ յամի Տեառն 1787»: - էջ 1-538 Պատմութիւն Ղազարա Փարպեցու արարեալ ի խնդրոյ զօրավարին Հայոց եւ մարզպանին տեառն Վահանայ Մամիկոնոյ - Սկիզբն առաջին գրոց...: էջ 539 «Յիշատակարան գրոյս - Գրեցաւ Պատմութիւն Ղազարու Փարպեցու յամի Տեառն 1787, ի վանս միանձանց Հայոց Մխիթարեանց, ի կղզին Սրբոյն Ղազարու որ ի Վենետիկ. օրինակեալ վասն արքունի Գրատան Փարիզու, ամենայն հաւատարմութեամբ եւ զգուշութեամբ ի հին ձեռագրէ, ձեռամբ իմոյ՝ նուաստ երիցու գաղղիացու Պետրոսի Սիմոնի Լոււտեան դասասաց վարդապետի արքունի Դպրատան Գաղղիացուց, ի ժամանակս Ստեփաննոսի երկրորդ Աբբայի այնր միաբանութեան, յորժամ իբր զամս երկու հիւրընկալեցայ ի նոցանէ ի սակս վարժութեան իմոյ յիւրեանց լեզու»⁴¹: Օրինակուել է վստահաբար Ա.՝ Հ^{մբ} 1206 ձեռագրից:

վանից միանձանց հայոց Մխիթարեանց. ի կարգէ սրբոյն Աստուծի արքայի, որ ի կղզոց Սրբոյն Ղազարու որ ի Վենետիկ. Յօրինեալ յամի Տեառն 1791 եւ ի թովին հայոց ՌՄԼՍ. Յառաջադրութեան կրօնիս գերայագոյ յարմարապետին մերոյ Տեառն Տեառն Ստեփաննոսի արքայի՝ անմիջական յաջորդի ամենապատիւ Մխիթարայ արքայի՝ հիմնարկողի միաբանութեանս, էջ 96ա (ամբողջը՝ 125 թերթ).- ՄՄ Անտիպ ձեռագրացուցակ Հ^{մբ} 133, 8/25:

⁴⁰ «Վենետիկի ցուցակ», հտ. Զ., էջ 695-700:

⁴¹ R. H. Kévorkian, A. Ter-Stepanian, Avec le concours de B. Outtier et de G. Ter-Vardanian, Manuscrits arméniens de la Bibliothèque nationale du France. Catalogue. Bibliothèque nationale du France / Fondation Calouste Gulbenkian, Paris, 1998, էջ 776 (այսուհետեւ՝ «Փարիզի ցուցակ»):

Փարպեցու Պատմութեան առաջին երեք տպագիրներին հիմք՝ վենետիկեան ձեռագրերի պատկերը պարզելուց յետոյ հարկ է քննել մի այլ խնդիր եւս. երկի «միակ մայր»⁴² ՄՄ Հ^մր 2639 (Միաբանի B կամ 1904ի տպագրի Զ) ձեռագիրը Էջմիածնի բուն՝ հին հաւաքածուի մէջ չի եղել եւ յայտնի «Կարենեան» կոչուած ցուցակում չի նկարագրուել, միայն ԺԹ. դ. վերջերին 611 համարի ներքոյ մտել է «Գէորգեան» հաւաքածուի մէջ: Այդ դէպքում ինչպէ՞ս պէտք է Ղունկիանոս Աշտարակեցին 1774 թ. եւ Գէորգ Դպիրը 1781 թ. նրանից պատճէնէին նոր օրինակներ՝ E կամ ՄՄ Հ^մր 1891 եւ Վենետիկի Հ^մր 1088:

Առ այս 1904ի տպագրի առաջաբանում կարդում ենք. «B-ն թէեւ չէ մտած Կարինեան ցուցակի մէջ, բայց... 1829ին արդէն շատունց Էջմիածնում էր» (Փարպեցի, 1904, էջ Զ.): 1672 թ. գրուած այս ձեռագիրն արձանագրուած է իր գրչութեան վայրի՝ Բաղէշի Ամլորդւոյ վանքի գրացուցակում, որ «կազմուած է 1689-1704 թթ.»⁴³ ընթացքում. «ԺԲ. Մէկ Մովսէս պատմագիրք, որ կայ ի մէջ է. պատմագիրք՝ Ագաթանգեղ, Մովսէս, Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղազարու Փարպեցոյ եւ Խոսրովու»⁴⁴: Ապա Գ. Աբգարեանը, վկայակոչելով 1828 թ. Մանուէլ վ. Կիւմուշխանեցու կազմած ձեռագրացուցակը⁴⁵, հաստատում է, որ այդ թուականին ձեռագիրն արդէն Էջմիածնում էր⁴⁶, 1833 թ. Էջմիածնում նոյն ձեռագիրն արձանագրել է նաեւ Յովհաննէս Շահխաթունեանցը⁴⁷, այն առկայ է նաեւ 1837ից յետոյ կազմուած մի այլ ցուցակում⁴⁸: 1851 թ. առաջ⁴⁹ եւ 1853ին եւս Էջմիածնում էր, բայց 1863ին տպուած «Կարենեան» ցուցակում⁵⁰ չկայ, իսկ 1878 թ. Ք.

⁴² Այս ձեռագիրը հիմնական է նաեւ Սեբեոսի Պատմութեան եւ «Մեծ» կամ ընդարձակ Կորինի համար:

⁴³ «Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրութեամբ՝ Գ. Վ. Արգարեանի, Երեւան, 1979, էջ 32 (այսուհետեւ՝ Սեբեոս, աշխ.՝ Գ. Արգարեանի):

⁴⁴ ՄՄ ձեռ. Հ^մր 737, 223բ. հմմտ. «Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ ցուցակ գրոց Ամրդոյ վանուց», (հրատ.) Ս[նեքերիմ] Տէր-Յակոբեան, «Արարատ», 1903, թ. Բ.-Գ., էջ 179 (ամբողջը՝ էջ 176-89):

⁴⁵ ՄՄ ձեռ. Հ^մր 3801, էջ 209բ. ձեռագիրն այստեղ ունի 446րդ համարը:

⁴⁶ Սեբեոս, աշխ.՝ Գ. Արգարեանի, էջ 33:

⁴⁷ ՄՄ ձեռ. Հ^մր 3801, 142բ, նաեւ՝ 98ա, հմմտ. Սեբեոս, աշխ.՝ Արգարեանի, էջ 27:

⁴⁸ ՄՄ ձեռ. Հ^մր 3801, 98ա:

⁴⁹ Տե՛ս Սեբեոս, աշխ.՝ Գ. Արգարեանի, էջ 14:

⁵⁰ «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի», տպագրեալ հրամանաւ տեսնո Մատթեոսի ընդհանրական հայրապետին ամենայն Հայոց, ծախսութիւն Կարնոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարենեանց, յօգուտ դպրոցի Ժառանգաւորաց Սրբոյ Էջմիածնի, Թիֆլիս, 1863. Ը., 230 էջ (կազմել է Դանիէլ վ. Շահնազարեանը. նկարագրուած է 2340 ձեռագիր):

Պատկանեանն էջմիածնի մատենադարանում այն չի գտել⁵¹։ Նշանակում է՝ մատենադարանում գրանցուած չէր. եւ այդպէս՝ առանց ձեռագրերի շարք մուծուելու էջմիածնում մնացել է մինչեւ ԺԹ. դ. վերջ, ուսումնասիրողները երբեմն գտել-օգտագործել են այն, երբեմն էլ չեն գտել⁵²։ Ապա Միաբանը 1891ին ձեռագրիս մասին գրել է. «Այս վերջին ձեռագիրը չգիտենք որչափ ժամանակից ի վեր գտնուում է Մայր Աթոռիս գրադարանում, 2463 թուահամարով»⁵³, տաս տարի անց էլ գրել է. «Բաղէշում Գրիգոր երէցը ընդօրինակում է B-ն, որ այժմս՝ բաւական թափառելուց յետոյ՝ մեր ձեռքումն է եւ որի անկորուստ պահպանութիւնը ապահովելու համար մուծել տուինք Գէորգ. Յուզակը (համար 611)»⁵⁴։

Այս ամէնից յետոյ սխալ չի լինի մտածել, որ ձեռագիրը պէտք է էջմիածին եկած լինի 1774 թ. առաջ, որպէսզի հնարաւոր լինէր այստեղ նրանից ընդօրինակել Փարպեցու երկի ՄՄ Հ^ր 1891 օրինակը⁵⁵ (եթէ իրօք երկրորդն առաջինից է պատճէնուած). այս առիթով նկատենք, որ արժէ յատուկ քննութեան նիւթ դարձնել այն հանգամանքը, որ ժամանակին Բաղէշի Ամլորդւոյ վանքից զգալի քանակի ձեռագրեր եկել են էջմիածին։

Բոլոր դէպքերում, կարեւոր ենք համարում եւ ժամանակագրական կարգով այստեղ թուարկում ենք գիտական գրականութեան մէջ առկայ այս՝ ՄՄ Հ^ր 2639 ձեռագրի նկարագրութիւնները.

1. Միաբան, Խորենացու Պատմութեան ուսումնասիրութիւն.- Արարատ, 1891/Գ. էջ 147-155 (նոյնը՝ Միաբան, ՀՈւ, Ա., էջ 60-68).

2. Գալուստ Տէր-Մկրտչեան, Ղազար Փարպեցու ձեռագրերը.- Արարատ, 1901/ԺԱ.-ԺԲ., էջ 548-9 (առանձնատիպ հրատ.՝ Գալուստ Տէր-Մկրտչեան, Ղազար Փարպեցու ձեռագրերը, Արտատպութիւն 1901 թ-ի «Արարատ»-ի նոյեմբ.-դեկտ. համարից, էջ 542-549. 1902. 8 էջ, ունի՝ «Дозволено цензурою 22 января, 1902 г. 2. Тип. мис.»), նոյնը՝ Միաբան, ՀՈւ, Ա. էջ 340-351).

3. Ղազար Փարպեցի, Տփղիս, 1904, էջ Ե-Զ.

⁵¹ Սեբէոս, աշխ.՝ Գ. Արգարեանի, էջ 15:

⁵² Տէս անդ, էջ 33-34:

⁵³ Միաբան, Խորենացու Պատմութեան ուսումնասիրութիւն, «Արարատ», 1891, թ. Գ., էջ 148:

⁵⁴ Միաբան, Ղազար Փարպեցու ձեռագրերը, «Արարատ», 1901, թ. ԺԱ.-ԺԲ., էջ 544:

⁵⁵ Այս ամէնով հանդերձ, պէտք է մեծ բարեբախտութիւն համարենք, որ ատիկ քան 130 տարի ձեռագիրն էջմիածնում մնացել է առանց մատենադարանում գրանցելու եւ համարակալելու, եւ, այդպէս լինելով, չի կորսուել։ Առ այս սկստենք, որ մինչեւ ԺԹ. դ. վերջերը մեր իրականութեան մէջ ձեռագիր գիրքը գործածական է եղել ճիշտ տպագրի պէս, մերօրեայ՝ թանգարանային արժէք եւ գնահատութիւն ստացել է երեւի թէ միայն անցեալ դարի սկզբում:

4. Ագաթանգեղոս, Տփղիս, 1909, էջ ԺԴ.

5. Մովսէս Խորենացի, Տփղիս, 1913, էջ ԺԵ-ԺԶ.

6. Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն. Զորրորդ տպագրութիւն, Բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երեւան, Արմֆան, 1939, էջ Թ. (ամբողջը՝ ՂԳ., 216 էջ):

7. Ակինեան Հ. Ներսէս Վ., Մատենագրական հետազոտութիւններ, Քննութիւն եւ բնագիր, հտ. Բ., Վիեննա, 1924 (Ազգ. մատ. ՃԴ.), էջ 4-10.

8. Կորիւն, Վարք Մաշտոցի. Բնագիրը ձեռագրական այլ ընթերցողածներով, թարգմանութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղեանի, Հայպետհրատ, Երեւան, 1941, էջ 20-21 (ամբողջը՝ 126 էջ).

9. Կորիւն, Պատմութիւն վարուց Ս. Մաշտոցի, Հրատարակեց հանդերձ ներածութեամբ եւ ծանօթութիւններով Հ. Ներսէս վ. Ակինեան, Բ. տպագրութիւն⁵⁶, Վիեննա, 1952, էջ ԽԱ. (ամբողջը՝ ԽԹ., 130 էջ).

10. Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեանի, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1957, էջ ԼԴ-ԼԶ. (ամբողջը՝ ԾԹ (LIX), 224 էջ).

11. Սեբէոս, Աշխ. Գ. Աբգարեանի, 1979, էջ 30-35.

12. Մայր ցուցակ ՄՄ, հտ. Ը., էջ 851-68:

Վերադառնանք Փարպեցու Պատմութեան բնագրի արծարծումներին մեր հիմնական խնդրին. ժամանակագրորէն յաջորդը վերն արդէն վկայակոչուած Նորայր Բիւզանդացին էր, որ սկսեց գրեթէ այսպէս. «Հին բնագրաց Քննական հրատարակութիւնք կը պահանջուին, եւ չեն Քննական ո՛չ Փարպեցույ չորրորդ տպագրութիւնն եւ ո՛չ Ագաթանգեղոսի վեցերորդն որ տրուեցան մեզ»⁵⁷: Տեսանք նաեւ, որ Նորայրն իրաւացի է տեսականօրէն, առաջնորդուած է լաւագոյնը ստանալու պահանջ-ցանկութեամբ, իսկ Մ. Աբեղեանը նոյն խնդիրներին վերաբերմամբ աւելի իրատես է եւ նախընտրելի է համարում ունենալ հնարաւոր լաւը, լաւագոյնը թողնելով ժամանակին եւ սերունդներին: Նորայրն իր շարադրանքի մեծ մասը նուիրել է Ագաթանգեղոսի հրատարակութեանը. «Կարծեցեալ ուղղութիւններով այլայլած է բնագիրն, մինչդեռ ականյայտնի սխալներ, 100իւ չափ,

⁵⁶ Էջ Դ. «Ա. տպագրութիւնը լոյս տեսած Հանդէս ամսօրեայ, 1949, էջ 170-320՝ «Մխիթար տօնագիրք»:

⁵⁷ Նորայր, Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց, էջ 161 (ամբողջը՝ էջ 161-74. վերջում բուրգրուած՝ «Վենետիկ, 9 յունիս - 6 յուլիս 1911»):

անփոփոխ մնացած են» (էջ 165), իսկ վերջում եկել է Փարպեցուն՝ «Պատմութիւնն եւ Թուղթը չունին Ագաթանգեղոսի բարձրաթիւ ճախրանքը: Գրուած են անպաճոյճ եւ ընտանեկան ոճով, ու կատարեալ ուսումնասիրութիւնն կարող էր սրբագրել զայնոսիկ 400 անգամ, միտ դնելով մատենագրին լեզուին յատկութեանց եւ պատմութեան ընթացքին» (էջ 173). եւ երկու էջում (173-4) ներկայացրել է սրբագրութեան իր նոր առաջարկները: Յիշենք, որ 1904ի տպագրի մէջ արդէն նրա շատ առաջարկներ նկատի են առնուած⁵⁸ եւ աւելացնենք, որ, «Յուշարձան»ի այս երկու էջից բացի, աւելի նորերս հրատարակուեց նրա «Նախնիք» աշխատութիւնը⁵⁹, որի աւելի քան 200 մեծագիր էջերում յիշատակուած են Փարպեցու Պատմութիւնը եւ Թուղթը, այսինքն՝ Փարպեցու ապագայ հրատարակութեան մէջ այս նոր առաջարկները եւս առնուածն արձանագրուելու ձեւով պէտք է հաշուի առնուեն:

Յաջորդը Լեւոն վ. Աթճեանն⁶⁰ էր, որ Փարպեցու Վենետիկի երրորդ տպագրից, Նորայր Բիւզանդացուց (իմա՝ 1904ի Տփղիսի տպագրից), Ս. վ. Պարոնեանից⁶¹ եւ Բ. Վ. Սարգիսեանից յետոյ հինգերորդ անգամ վերածեւեց-վերադասաւորեց Փարպեցու Պատմութեան առաջաբանը⁶². Նախորդ վերադասաւորողներին թուարկելով, գրել է. «Իմ եզրակացութիւնը այն եղաւ որ կարելի է յառաջաբանին ցրուած բեկորները ժողվելով, տրամաբանական եւ պատմական կարգով մը յօրինել ամբողջ եւ անպակաս յառաջաբան մը: Ընթերցողներուն՝ յաջողութեանս վկայութիւնը տալ»⁶³: Ապա փոխնիփոխ՝ առաջաբանի մասերով եւ մանրագիր բացատրութիւն-

⁵⁸ Նորայր Ն. Բիւզանդացի, Ղազարայ Փարպեցոյ Պատմութեան Հայոց յառաջաբան, «Լումայ», 1896, թ. 2, էջ 309-328. Նորայր Բիւզանդացի, Հայկական բառարանութիւն, Պոլիս, 1880, էջ 79-85. Նորայր Բիւզանդացի, Քննասէր, պրակ Բ., Ստոկհոլմ, 1887, էջ 16-58 (տոյնն է՝ Նորայր Բիւզանդացի, Քննասէր, աշխատասիրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2005, էջ 26-42, որ «Պատմաբանասիրական հանդէս»ի, 2005, թ. Բ., 101-143 էջերի առանձնատիպն է):

⁵⁹ Նորայր Ն. Բիւզանդացի, Նախնիք, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը. ի յիշատակ Տիկին Սեմա Յակոբսոն Նորայրի, Ժնև, 1996, 574 էջ (այսուհետև՝ Ն. Բիւզանդացի, Նախնիք):

⁶⁰ Արագանի անունը՝ Յովհան. ծն. 15 հոկտ. 1888 թ., ի Պոլիս - 30ամեայ մի. 22 դեկտ. 1918 թ., յԱզոյոյ (քաղէկ ենք Ս. Ղազարի միաբանացանկից):

⁶¹ Ս. վ. Պարոնեան, Ղազար Փարպեցոյ Պատմութեան Հայոց, Յառաջաբանն ուղղագրեալ՝ հանդերձ տեսութեամբ մը Յառաջաբանից վրայ, «Բանասէր», Փարիզ, 1899, էջ 267-79:

⁶² «Ղազար Փարպեցոյ պատմութեան յառաջաբանին նոր ընթերցում մը», ուսումնասիրեց Հ. Լեւոն Աթճեան, Վենետիկ. Ս. Ղազար, 1916. 31 էջ (սա առանձնատիպ հրատ. է, նախապէս տպուել է՝ «Բազմամէլ», 1916/Է.-ԺԲ., էջ 145-53):

⁶³ Անդ, էջ 7:

ներով, նաեւ՝ տողատակի ծանօթութիւններով ներկայացրել է իր նոր դասաւորութիւնը: Առաջաբանի վերադասաւորումների խնդիրը մեր ներկայ նպատակից դուրս է, ուստի եւ թէ՛ նախորդ, թէ՛ այս առաջարկների մանրամասների կամ փաստարկների մէջ չենք մտնում:

Այսպիսի յաջորդ եւ, կարծեմ, առայժմ վերջին առաջարկը կրկին Վենետիկի Մխիթարեան միաբան Գրիգոր վ. Սարգսեանինն էր. 1932ի վերջին հրատարակուած մի յօդուածի⁶⁴ սկզբում նա ազդարարել է՝ Փարպեցու Պատմութեան «Նոր հրատարակութիւնն ահա ընդ մամուլ է: Ամենէն աւելի կնճռոտ մասը Յառաջաբանն է: Շատ չարհրկուած է այն, կտրուած՝ եւ բազմաթիւ ետեւառաջութեանց տեղի տուած: Եղած ձեռագիրները շփոթ ձեւով մեզ կը ներկայացնեն զայն...»: Ապա թուարկել է Պատմութեան առաջաբանի տեղաշարժեր առաջադրած հեղինակներին՝ Վենետիկի Գ. տպագիր, Նորայր Բիւզանդացի, Եղիշէ Մատաթեան, Սուքիաս վ. Պարոնեան, Հ. Ղեկոնդ Ալիշան, Հ. Բարսեղ Սարգսեան եւ Լեւոն վ. Աթճեան. «Բոլորն ալ նորանոր փոփոխութիւններով՝ փորձեցին Յառաջաբանը կարգի դնել, եւ իւրաքանչիւր ոք իր մասնական յաջողութիւնն ունի: Մօտալուտ հրատարակութիւնս ամենուն կատարելութիւնները պիտի ամփոփէ իր մէջ, ջանալով միշտ, կարելի եղածին չափ, ձեռագրաց հեղինակութիւնը վեր պահել, յարգելով միանգամայն՝ ուր հարկը պահանջէ՝ քաջաբիւր բանասիրաց սրամիտ տեսութիւնները: Որով հարցին վերջնական լուծումը չտուած՝ Ազգիս գիտնոց կ'առաջարկեմ զայս, անոնց դիտողութիւնն ու կարծիքը լսելու փափաքով»⁶⁵:

Գ. վ. Սարգսեանի դասաւորումը համեմատեցինք «միակ մայր» ձեռագրի եւ Տիդիսի 1904ի տպագրի դասաւորութիւնների հետ եւ համոզուեցինք, որ նրա առաջարկածը եթէ իմաստի տեսակետից ինչ որ կէտերում եւ ինչ որ չափով ընդունելի էլ համարուի, ապա շարադրանքի անկապակցութիւնը վերացնելու համար նրա տեղաշարժած հատուածների անհամաչափութիւնը լիովին անընդունելի է դարձնում այդ առաջարկները: Եթէ գրուածքի անկապակից լինելը համարուում է հետեւանք ենթադրական հին գաղափար օրինակ(ներ)ի մէջ թերթերի խառնուածութեան եւ անկումների, ապա պէտք է տեղաշարժուող հատուածների գոնէ մօտաւոր

⁶⁴ Հ. Գրիգոր Սարգսեան, Փարպեցոյն Յատաչարանը յղուած, «Բագմավէպ», 1932, թ. Ժ.-ԺԱ., էջ 444-59. բացատրութիւնները՝ էջ 444-452, «յղուած Յատաչարանը»՝ էջ 453-459:

⁶⁵ Անդ, էջ 444: Ապա բացատրում է, որ առաջարկի իր վերադասաւորումը հրատարակում է՝ 1, 2, 3 եւլն «թիւերով ձեռագրական տարբերութիւններ»ով եւ «մատենագրական ինչ ինչ կարեւոր դիտողութիւններ»ով, «Ա, Բ, Գ տաւերով» էլ բացատրում է իր արած ամէն տեղաշարժ կամ ընտրութիւն:

Համաչափութիւն լինէր, որ բոլորովին չկայ, որովհետեւ տեղից տեղ են տարել 1, 3, 4 եւ 20-30-40 տողանոց⁶⁶ հատուածներ, իսկ թերթերի խառնուածութեան հետեւանքով այսպէս չի կարող լինել, որովհետեւ նոյն ձեռագրի մէջ չի կարող մի թերթը 4 տող պարունակել, միւսը՝ 20, երրորդը՝ 40 եւ այլն. ուրեմն, կրկնենք՝ որքան էլ պատճառաբանուած լինեն, տեղաշարժերը շատ կէտերում բռնազբօսիկ են եւ անընդունելի:

Ինչեւէ, նոյն յօդուածի հետեւեալ ազդն աւելի կարեւոր է. «Այդ միեւնոյն աշխատութիւնը Ղ. Փարպեցւոյն նոր հրատարակութեան բովանդակ երկին իւրաքանչիւր էջին մէջ կրկնուած պէտք է տեսնեն Ազգիս ուսումնասէրք»⁶⁷: Բայց, ցաւօք, սրանից յետոյ հրատարակուած վենետիկեան «չորրորդ»՝ փոքրագիր տպագրութեան՝ նոյն Գ. վ. Սարգսեանի ստորագրած «Ընթերցողաց» խորագրով երկէջ մուտքի մէջ կարդում ենք. «Անճաշ վարկաք փոքու մատենական տարազուն՝ ծանօթութիւնս եւ համեմատութիւնս յաւելուլ ի քղանցս իւրաքանչիւր իջից, հակիրճ ազգիւս շատացեալք: Ի մեծագիր անդ տպագրին, ընդ հռւայ՝ յընթացս տարւոյս երեւելոյ, կարգեսցուք մանր զամենայն ի վայելս բանասիրաց եւ յարաճուն փառս հայրենեաց»⁶⁸: Սակայն խոստացած «մեծագիր» հրատարակութիւնը լոյս չի տեսել՝ գուցէ թէ նոյն 1933ին Եւրոպայում սկսուած եւ շատ արագ զարգացումների հասած քաղաքական լուրջ տեղաշարժերի պատճառով:

Այսուհանդերձ, թէեւ այդ տպագիրը ընթերցումներ եւ ծանօթութիւններ գրեթէ չունի, բայց որոշեցինք ստուգել նրա բնագրի որակը. համեմատեցինք Պատմութեան սկիզբը՝ 1904ի տպագրի էջ 9-11 (տ. 3) եւ 1933ի տպագրի էջ 21-30 (տ. 5) մասերը, եւ արձանագրեցինք հետեւեալը.

	Փարպեցի, 1904	Փարպեցի, 1933
1	էջ 9 տ. 1 տեղիս	էջ 23 տ. 2 ն. տեղի
2	էջ 9 տ. 4 երկրիս	էջ 24 տ. 4 > երկրիս
3	էջ 9 տ. 24 սիփեալ	էջ 25 տ. 1 ն. > սիփեալ
4	էջ 9 տ. 27 պարարտ արօտք	էջ 26 տ. 5 պարարտարօտք
5	էջ 9 տ. 28 րնդունի իշանց	26 տ. 7 րնդունի իշանց
6	էջ 9 տ. 28 զանհամարոյր	26 տ. 8 զանհամար
7	էջ 9 տ. 32 քացօթեգացն	էջ 26 տ. 8 ն. քացօթեգացն

⁶⁶ Մեր հաշուարկի 1 տողի լայնքը 17 սմ է եւ ունի շուրջ 80 տպագրական նիշ:

⁶⁷ «Բագմավէյ», 1932, թ. Ժ.-ԺԱ., էջ 445:

⁶⁸ «Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», չորրորդ տպագրութիւն, ի վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, Ռ-ՅՀԲ. - 1933, էջ Զ. (8x5 սմ գրադաշտով Ը., 675 էջ). այս գրքի միայն սկզբի էջերում կան մատների վրայ հաշուելի քանակի շատ համառօտ ծանօթութիւն-ընթերցումներ:

8	էջ 9 տ. 35 յօրինումածոցն	էջ 26 տ. 1 ն. յօրինումածոց
9	էջ 10 տ. 8 շահս	էջ 27 տ. 10 ն. զշահս
10	էջ 10 տ. 13 յոսկէհոուս	էջ 27 տ. 1 ն. ոսկէհոուս
11	էջ 10 տ. 14 կերողացն	էջ 28 տ. 3 > կերողացն
12	էջ 10 տ. 31 զխիզախական զաղեղ- նաձայնն եւեթ բարբառիցին	էջ 29 տ. 9-10 ն. զխիզախականն եւ զա- ղեղնայինն եւեթ բարբառեսցին

Կէտադրական անէական տարբերութիւններից բացի՝ այս համեմատութեամբ ակնյայտ է, որ 1933ի տպագիրն ունի թէ՛ ուշագրաւ եւ նկատառելի նորութիւններ (1, 6), թէ՛ վրիպում (5) եւ թէ՛ անուշադրութեան հետեւանքով բառերի անտեղի անկում-պակասներ (2, 3, 11), որ ամենաանցանկալին է: Այսինքն՝ Փարպեցու ճշգրտուած բնագիր տպագրելու նպատակով Գ. վ. Սարգսեանի պատրաստած եւ չտպուած ընթերցումներն ու ծանօթութիւնները Վենետիկում փնտրելն անիմաստ է, որովհետեւ այսպիսի դէպքերում մի կասկածն անգամ բաւարար է՝ անցեալում արուածը մի կողմ դնելու եւ ամբողջ գործը սկզբից անելու համար: Այսինքն՝ բնագրի ապագայ հրատարակութեան ժամանակ 1933ի տպագիրը պէտք է համեմատել միայն Գ. վ. Սարգսեանի իրաւացի ընտրութիւններն ուշադրութեան առնելու չափով:

Նոյն Գրիգոր վ. Սարգսեանը 1931 թ. վերջին եւս յայտարարել է. «Ղազարայ Փարպեցույն Պատմութեան նոր հրատարակութիւնը կը պատրաստենք, բոլոր ձեռագիրը եւ տպագիր օրինակները աչքի առջեւ ունենալով», եւ այդ առիթով՝ «Ս. Սահակայ տեսիլքը նախ, արաբական շրջանին եւ հետագայ ուրիշ դէպքերու բացայայտ ակնարկութեամբ, իբր խոչընդոտ կը կանգնի, եւ իր հարազատութեան մասին կասկածիլ կու տայ»⁶⁹: Ապա ուսումնասիրել է խնդիրը, յայտարարել, որ Տեսիլը Փարպեցու պատմութեան հետ կապուել է առնուազն Ժ. դարից յետոյ, եւ տպագրել է ընթերցումներով ու ծանօթութիւններով օժտուած բնագիրը՝ Սահակ Պարթեւի Պատմութիւնը, Տեսիլը եւ նրա Մեկնութիւնը: Համեմատած օրինակներն են՝ Վենետիկի մեզ յայտնի երկու ձեռագիրը եւ երեք տպագիրները, 1904ի Տփղիսի տպագիրը, Չամչեանի Պատմութեան Գ. հատորի վերջին էջերում տպուածը, Ագաթանգեղոսի 1930ի տպագիրը⁷⁰, Սոփերք հայկա-

⁶⁹ Հ. Գրիգոր Սարգսեան, Տեսիլ Ս. Սահակայ Պարթեւի, «Բագմավէպ», 1931, թ. ԺԲ., էջ 529 (հրապարակման ամբողջութիւնը՝ «Բագմավէպ», 1931, թ. ԺԲ., էջ 529-36, 1932, թ. Ա., էջ 12-21):

⁷⁰ «Ագաթանգեղայ պատմութիւն», Գ. տպագր. («Ընտիր մատենագիրք»), Վենետիկ, 1930, ԾԲ., 672 էջ:

կանք, հտ. Բ., էջ 45-67⁷¹ եւ «Հ. Ղ. Ալիշանի բաղդատած օրինակը». հիմք է ընդունել «Հ. Կարապետ Եսայեանի» օրինակը (տե՛ս ստորեւ), ասել է, որ իր հրատարակած բնագիրը «յետոյ՝ Փարպեցույն պատմութեան մէջ եւս պիտի մտնէ... Սոյն աշխատութեանս մէջ՝ աչքիս առջեւ ունեցայ Ղգ. Փար. բոլոր ձեռագիր եւ տպագիր օրինակները: Տարբերակները ջանացեր եմ անվրէպ ճշգրտութեամբ նշանակել»⁷²: Այսինքն՝ Փարպեցու Պատմութեան ձեռագրերի շրջանակից դուրս է եկել եւ համեմատել նաեւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի Տեսիլի ճառընտրային տարբերակներ (այգպիսիք են՝ Սովերք, հտ. Բ., Ալիշանի օրինակ եւլն.):

Մեր խնդրի համար կարեւոր յաջորդ հրապարակումը Ներսէս վ. Ակինեանինն է. սկզբում յօդուածով, ապա առանձին գրքով⁷³ նա հանգամանալի քննութեան է ենթարկել նոյն Տեսիլը: Իր հիմնական խնդիրը համարել է բնագրի առաջացման ժամանակի որոշումը. «Թէ անվաւերական գրութիւն մը ունէինք մեր առջեւ, ընդունուած էր արդէն. վէճի առարկայ էր միայն անոր գրութեան ժամանակը: Մանր քննութեան ենթարկելով այս հարցը, յանգեցայ այն եզրակացութեան, թէ երեք հանգրուաններով հասած է գրուածքս այժմեան վիճակի, ոչ ուշ քան Ը. դարու սկիզբը» (էջ Ե.): Շարադրանքի սկզբում պատկերել է «Բնագրին աւանդութիւնը, նախնեաց վկայութիւններն եւ նոր եւ նորագոյն շրջաններուն անոր շուրջը յայտնուած տեսութիւնները» (էջ 1). ըստ բնագրի մասերի խորագրերի եւ սկսուածքների, միայն համարներով յիշատակել է Տեսիլի իրեն յայտնի՝ 7+4+4=15 ձեռագիր (էջ 5-7). այսպէս՝

1. Էջմիածնի⁷⁴ 7 - Հ՞ր 894/992, 920/993, 925/996, 914/1521, 916/1522, 918/1524, 919/3777.

2. Վենետիկի Մխիթ. մատ-ի 2 (Հ՞ր 1014/201 եւ 1002/207. նաեւ՝ հաւանաբար սրանցից մէկի հիման վրայ տպուած՝ Սովերքի Բ. հատորը),

⁷¹ «Պատմութիւն վասն Սրբոյն Սահակայ հայրապետին եւ Մեսրոպայ վարդապետին», Վենետիկ, ի գործարանի Մխիթարեանց (Սովերք հայկական Բ.), 1853, 161 էջ:

⁷² Անդ, 1932/Ա., էջ 15-16: Տպագրածը համապատասխանում է Տիդիսի 1904ի հրատ. էջ 28ի տող 14ից մինչեւ էջ 37, տող 9, կամ ԺԷ. «գլխին» է եւ ԺԸ. «գլխի» առաջին պարբերութիւնը, որ նաեւ ճշգրիտ համապատասխանում է նոյն Գ. վ. Սարգսեանի 1933ի տպագրի 87-109 էջերին:

⁷³ Հ. Ներսէս վ. Ակինեան, Տեսիլ Ս. Սահակայ. Մատենագրական-պատմական քննութիւն, Վիեննա, 1948, Ը., 93, 4 չի. էջ (Ազգային մատենադարան, ՃՄԷ., նախապէս տպուած՝ «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 48-87). այսուհետեւ գրքի էջահամարները յիշատակում ենք վերը՝ շարադրանքի մէջ:

⁷⁴ Ակինեանը յիշատակել է «Կարենեան» ցուցակի համարներով, որոնք այստեղ նախորդում են թեք գծին, որից յետոյ էլ գրել ենք Մաշտոցեան Մատենադարանի ներկայ համարները:

Ալիշանի եւ Հ. Կ. Եսայեանի համեմատած օրինակները (նոյն ընդ՝ Վենետիկի Հ^ր 2419 եւ 2569)։

3. Փարիզի, Վատիկանի, Տիւբինգենի եւ Զմմառի 1ա կան (նոյն անուններով տե՛ս ձեռագրերի մեր շարքի մէջ)։

Ակինեանը Սահակ Պարթեւի Տեսիլը ներկայացրել է խառն, փոխնի-փոխ՝ մէկ ըստ Փարպեցու պատմութեան՝ «ա. Յառաջաբանական մուտք. բ. Տեսիլն եւ Մեկնութիւնը. գ. Վերջաբան» (էջ 2-4), ապա՝ «Նոյնը Ղ. Փարպեցւոյ միջնորդութեամբ անցած է Ճառնտիրներու, որոնք յառաջ կը բերեն զայն ի վարս Սահակայ, հանդերձ յառաջաբանական եւ վերջաբանական մասերով» (էջ 4), որից յետոյ կրկին խորագրերի եւ սկզբնատողերի անկանոն՝ մերթ տառերով (բ-ե.), մերթ նոյն տառերի միջեւ գրած թուերով (1-5, 3) ներկայացրել է ճառնտրային տարբերակը։ Իր թուարկած բոլոր ձեռագրերը նա համարել է Փարպեցու Պատմութիւնից բխած, բացի՝ «Միակ օրինակը, որ Ղազարէն անկախ կ'երեւայ, է էջմ. Կար. 919, ե. (ԺԲ. դ.) - Յուլ. 99-100» (էջ 7). ապա՝ «Հարկաւոր է էջմիածնի այս ձեռագիրը մանր բաղդատել Ղ. Փարպեցւոյ օրինակին հետ, իմանալու համար, թէ ի՞նչ է երկու օրինակներուն յարաբերութիւնը» (էջ 8-9)։ Նրա պնդման միակ եւ անբաւարար փաստարկն այն է, որ այդ ձեռագրի մէջ Տեսիլը եւ նրա Մեկնութիւնը բաժանուած են Ա-ԻԸ. հատուածների, սակայն նախ՝ գերազանցապէս թերի նկարագրութիւններով Ակինեանը գիտէր միայն սակաւաթիւ ձեռագրեր, երկրորդ՝ նոյն Ա-ԻԸ. հատուածումն ունեն նաեւ նրան անծանօթ մնացած շատ այլ ձեռագրեր. մի խօսքով՝ Ակինեանի մատնանշած «Կար. 919»ը, որ ՄՄ Հ^ր 3777 ձեռագիրն է (տե՛ս մեր ցանկի մէջ), իր տեսակի մէջ եզակի չէ, իսկ Տեսիլի ձեռագրական աւանդոյթը շատ աւելի ճոխ եւ բարդ է, քան նա գիտէր, ուստի եւ ճշգրիտ եզրակացութիւններ կարելի է լինելու անել միայն Տեսիլի հնարաւոր չափով բոլոր ձեռագրերի եւ ընդհանրապէս ձեռագրական աւանդոյթի կատարեալ ուսումնասիրութեան հիման վրայ։

Բացի այդ, ճառնտրային ձեռագրերի մասին եւս Ակինեանի ընթերցողը պարզ պատկերացում չի ստանում, որովհետեւ նա իր յիշատակած ձեռագրերը չի տեսել։ Մինչդեռ Սահակ Պարթեւի Տեսիլի բնագիրը Փարպեցու Պատմութեան ածանցեալ, սակայն կարեւոր մաս է, նաեւ՝ առանց Տեսիլի ձեռագրերի հարցի յստակման նոյն Պատմութեան ձեռագրական աւանդոյթի պատկերը թերի կլինի։ Միաժամանակ, քանի որ մեր այս շարադրանքը Փարպեցու երկերի բնագրերի պատրաստումը նախապատրաստող քայլ է, այդ յոյժ անհրաժեշտ անելիքի կարեւորագոյն կէտերի

կամ հարցերի մատնանշում-չեչտում, ուստի որոշեցինք, Ակինեանի գրքոյ-կում եւ Փարպեցուն վերաբերող մատենագիտութիւններում նշուածների հետ միասին, կազմել Տեսիլի մեզ յայտնի բոլոր ձեռագրերի ժամանակագրական ցանկը, որ, բնականաբար, աւելի ընդգրկուն է (57 միաւոր⁷⁵) եւ որը ծաւալի մեծութեան պատճառով յօդուածիս կցել չենք կարող, ուստի հրապարակելու ենք մի այլ առիթով: Յանկիս հնագոյն ձեռագիրը 1180 թ. է, վերջինը՝ ԺԹ. դարի (նաեւ՝ չթուագրուած մի միաւոր): Ձեռագրերի մեծ մասը Մաշտոցեան Մատենադարանի հաւաքածուի լաւորակ ընդօրինակութիւններ են. մեր ընդարձակ ձեռագրացուցակն օգտագործելով հանդերձ⁷⁶՝ Փարպեցու բնագրի ապագայ պատրաստողին ճշգրիտ ուղենիշներ տալու նպատակով, ուղղակի բուն ձեռագրերից քաղել ենք ամբողջական վերնագրերը, սկզբնատողերն ու վերջնատողերը: Գալով ձեռագրերի պարունակութեանը կամ Սահակ կաթողիկոսին վերաբերող շարադրանքի եւ նրա մասերի ընդհանուր պատկերի խնդրին, պէտք է արձանագրենք, որ որոշ ձեռագրեր ունեն միայն բուն Տեսիլի բնագիրը, աւելի շատ են այն օրինակները, որոնց բնագրային կտորները չորսն են՝ նախաբանային մաս («Յառաջաբան» կամ «Ի յիշատակի սրբոյն Սահակայ»), Տեսիլը, նրա Մեկնութիւնը եւ վերջաբանային մաս («Կատարումն» կամ «Մահ սրբոյն Սահակայ»)⁷⁷: Իսկ երկու ձեռագիր շարադրանքն աւելի են ընդարձակել եւ միաւորների թիւը հասցրել եօթի՝ ներառելով նաեւ «Վասն սրբոյն Մեսրոբայ, որ Մաշտոց կոչեցաւ» յաւելումը. այս երկուսն ունեն իրենց ստացած բնոյթին համապատասխանող լուսանցային ընդհանուր խորագիր՝ «Պատմութիւն սրբոյն Սահակայ» (ՄՄ ձեռ. Հ^մ 1920, 233ա, ձեռ. Հ^մ 1458, 229բ-30ա), այսինքն՝ սրանք արդէն Փարպեցու Պատմութեան սահմաններից ինչ որ չափով դուրս եկած բնագրախմբեր են, որոնց մէջ վստահաբար օգտագործուած են նաեւ այլ աղբիւրների տեղեկութիւններ⁷⁸:

⁷⁵ Հնարաւոր է՝ ապագայում լրացուի այլ ձեռագրերով, սակայն հիմնական արժէքաւոր օրինակներն մեր ցանկում արդէն կան:

⁷⁶ Մեր ուղենիշները եղել են հաւաքածուիս թէ՛ համառոտ ցուցակը, թէ՛ Մայր ցուցակի տպուած ութհատորեակը, թէ՛ դէտեւս անտիպ՝ աշխատանքային վիճակում գտնուող նկարագրութիւնները, եւ թէ՛, ի վերջոյ, բուն ձեռագրերը:

⁷⁷ Ձեռագրերն ըստ Տեսիլի բնագրի ենթամիավորների եւ շարադրանքային փոփոխակների դասակարգելուց առայժմ ձեռնպահ ենք մնում, որովհետեւ այդ աշխատանքը պէտք է անել բնագրերի առնուազն փորձական հատուածներ համեմատելուց յետոյ:

⁷⁸ Ըստ այսմ՝ մեր ցանկագրած ձեռագրերի տուած նիւթը յաճախ Փարպեցու Պատմութեան ծիրից դուրս է գալիս եւ վերաբերում է վերը՝ «Սահակ Պարթեւի Պատմութիւն» բնորոշած բնագրախմբի ինքնուրոյն կենցաղավարութիւն-գարգացման ուղուն, որ ինքնին արդէն հետազոտական այլ խնդիր է:

* * *

Դառնանք մեր խնդրի ժամանակագրական յաջորդ կէտին. աւելի նորերս Նորայր եպս. Պողարեանը յայտնաբերել է Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի Հ^ր 1Բ. Ճառընտիր ձեռագրի (Երուսաղէմում գրուած 1417-1419 թթ.) 720բ-728բ էջերն զբաղեցնող «Վասն նշանագրութեան Հայերէն գրոց ի թագաւորութեանն Վռամշապհոյ, ի ձեռն խնդրոյ Սահակայ եւ Մեսրովբայ» բնագիրը⁷⁹, որ համապատասխանում է Փարպեցու Պատմութեան 1904ի տպագրի 12-28 եւ 1933ի տպագրի 34-86 էջերին, ապա եռատող զուգադրումներով հրատարակել է այդ ձեռագրի (Ե), Փարպեցու Պատմութեան 1904ի Տփղիսի (Տ) եւ 1933ի Վենետիկի (Վ) ընթերցումները⁸⁰, ակնյայտ դարձնելով, որ Ճառընտիրը բազմաթիւ սրբագրումներ եւ ճշգրտումներ է մտցնում տպագիրներով յայտնի բնագրի մէջ: Մի տարի անց արդէն նոյնաբար եւ ամբողջութեամբ, առանց որեւէ համեմատութեան հրատարակել է Ճառընտրի բնագիրը, բացատրելով. «Այս հատուածին առանձին հրատարակութեան նպատակն է ընծայել նպաստ մը Ղ. Փարպեցիի Պատմութեան բնագրի սրբագրութեան»⁸¹:

Ապա Պարոյր Մուրադեանը եւ Կարէն Իւզբաշեանը հրատարակել են Սանկտ Պետերբուրգի Ռուսաստանի ԳԱ Արեւելեան ձեռագրերի ինստիտուտի Հայերէն A-82 ձեռագիր Մանրուսմունքի պատառիկ պահպանակները⁸². ձեռագրի ստացող Եսայի ըաբունապետին նոյնացնելով յայտնի Նչեցի վարդապետի, իսկ գրիչ Պօղոսին՝ նրա աշակերտ Պօղոս Կիլիկեցու հետ, ըստ ամենայնի իրաւացիօրէն մականբերել են գրչութեան տեղը՝ Գլաձոր, ժամանակը սահմանել են 1284-1338 թթ. միջեւ. սա նշանակում է, որ Գլաձորում, անգամ՝ մերձակայ վայրերում գրուած ձեռագրերի մէջ եւս փնտրելի են Փարպեցու երկի մասեր պարունակող նոր պահպանակ-թերթեր: Պատառիկի մագաղաթէ բնկալ ձեռագիրն ունի 12,5x10 սմ

⁷⁹ Հմմտ. «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. Ա., կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1966, էջ 16 (այսուհետեւ՝ «Երուսաղէմի ցուցակ», Ա.):

⁸⁰ Նորայր եպս. Ծովական, Ղազար Փարպեցի. նորագիտ հատում, Սիոն, 1966, թ. Դ., էջ 200-204:

⁸¹ Ն. Լայիսկ. Պողարեան, Նորագիտ հատում Ղազար Փարպեցու «Հայոց Պատմութեան», ԲՄ, հտ. 8, 1967, էջ 263 (ամբողջը՝ էջ 263-274):

⁸² Պ. Մուրադեան, Կ. Իւզբաշեան, Ղազար Փարպեցու Պատմութեան նորայայտ պատառիկը, ԲՄ, հտ. 11, 1973, էջ 7-32:

մեծութեան, միասին գրչութեամբ 139 թերթ, էջում՝ 18-20 տող⁸³: Իսկ պահպանակներն ստացուած են Ժ-ԺԱ. դդ. թուագրուած մայր ձեռագրի երկսիւն, լաւորակ մագաղաթէ, մօտ 24,2x19,3 չափսի մի թերթից, որի գրչութիւնն ուղղագիծ երկաթագիր է, էջում ունի 21 տող. թերթը մէջտեղից կիսուել է, ամէն կէսն էլ կրկին մէջտեղից ծալուել եւ բնկալ ձեռագրի մէջ դրուել է որպէս 2 (սկզբում) եւ 2 (վերջում), այսինքն՝ 4 թերթ պատառիկ-պահպանակ. պարունակածը Համապատասխանում է 1904 թ. տպագրի էջ 80₂₇-81₅₋₁₃ մասին (24 տող), եւ նրա շնորհիւ բնագրի այդ մասում արուել են տասնեակ ճշգրտումներ, յստակուել են անյստակ շատ կէտեր⁸⁴, որոնց շնորհիւ պատառիկի պարունակածի սահմաններում Փարպեցու պատմութեան շարագրանքը բոլորովին նոր պատկեր-իմաստ է ստացել, աւելին՝ այստեղ կայ նաեւ նորայայտ 3 բառ (սնատուն, դաշտանատուն, խաւղաման), ի յայտ են եկել խօսակցական (բարբառային) նոր ձեւեր եւ կէտագրական նորոյթներ⁸⁵:

Մի տարի յետոյ Պ. Մուրադեանը տպագրել է նաեւ Փարպեցու Պատմութիւնից Համառօտուած-արտածուած՝ Սահակ Պարթեւ կաթողիկոսի վարքը եւ Տեսիլը⁸⁶ ըստ ՄՄ Հ՞ր 4803 (78ա-85ա, ԺԵ. դար, գրիչ՝ Գրիգոր Ծերենց իւլիսեցի, ստացող՝ պարոն Հնդու) եւ ՄՄ Հ՞ր 8917 (ԺԶ. դ., 79բ-91ա) ձեռագրերի (երկրորդի բնագիրը որպէս տողատակի ընթերցումներ)⁸⁷:

«Հրապարակուող բնագրերի նպաստը չեչտած լինելու համար» Պատմութեան եւ Ծառնտրային բնագրի ութ զուգադրում անելով՝ Մուրադեանը երկու ձեռագրերի բաղդատուած հրատարակութիւնն արել է առանց որեւէ միջամտութեան, որովհետեւ կարծում է՝ «նպատակը բնագիրը շրջանառութեան մէջ դնելն է, իսկ սրբագրելիքները կատարուելու են Պատմութեան եղած հրատարակութեան, Ն. Պողարեանի հրատարակած ու սոյն յօդուածների համեմատութեան հիմքի վրայ, նկատի առնելով բանասիրական գրականութեան մէջ արձանագրուած ուղղումները»⁸⁸, այսինքն՝ ճառնտրային այս բնագրի տպագրումը համարում է Փարպեցու Պատմութեան ապագայ գիտական հրատարակութեան մի ատաղձ:

⁸³ Անդ, էջ 11:

⁸⁴ Անդ, էջ 21-27

⁸⁵ Մանրամասները տե՛ս անդ, էջ 28-32:

⁸⁶ Հրատարակուած բնագիրը համապատասխանում է Տիդիսի 1904 թ. տպագրի էջ 18, տ. 21ից մինչեւ էջ 38, տ. 27 կամ ԺԲ-ԺԳ. «գլուխներին»՝ առաջին «Դրուագի» զգալի մասին:

⁸⁷ Պ. Մուրադեան, Հատուած Ղազար Փարպեցու «Պատմութիւնից», Հայագիտական հետազոտութիւններ, պրակ Ա., Երևան, 1974, էջ 204-226 (ամբողջը՝ էջ 194-226):

⁸⁸ Անդ, էջ 203:

Յաջորդ նշանակալի քայլը 1904 թ. տպագրի նոյնական վերարտադրութիւնն էր⁸⁹, որից արտածուած է առաջաբանային-մատենագիտական առանձնատիպ մի տարբերակ⁹⁰, իսկ վերջինիս մատենագիտական մասն էլ հայերէնացուեց-լրացուեց նոյն Պարոյր Մուրադեանի նախաձեռնութեամբ⁹¹: Մատենագիտութիւնը տրոհուած է բաժինների, որոնց մէջ, փարպեցիագիտութեան զարգացման ընթացքն ակնառու ցուցադրելու նպատակով՝ թուարկումներն արուած են ժամանակագրական կարգով (ըստ գրուելու կամ տպագրուելու ժամանակի):

1. Զեռագրերը, Պատմութեան ձեռագիր հատուածներ, Թուղթ առ Վահան Մամիկոնեան.

2. Հրատարակութիւններ. ա. Պատմութեան եւ Թղթի ամբողջական բնագրեր, բ. Պատառիկներ եւ դրուագներ, գ. Ս. Սահակի Տեսիլի հին վրացերէն պատառիկը.

3. Պատմութեան եւ Թղթի թարգմանութիւններ. ա. ժամանակակից հայերէն, բ. Ֆրանսերէն, գ. Անգլերէն, դ. Վրացերէն, ե. Իտալերէն.

4. Հիմնական մատենագիտութիւն (էջ 14-23), իմա՝ Փարպեցուն վերաբերող՝ 1784-1999 թթ. տպուած գրականութիւնը⁹²:

Թէ՛ անգլերէնը եւ թէ՛ հայերէնը արձանագրեցին-հանրագումարի բերեցին այս հեղինակի եւ նրա երկի հետ արուած աշխատանքները. երկուսն էլ ուղենշային իրենց դերով մեծապէս օգտակար եղան ներկայ շարագրանքի ստեղծմանը, ուստի մենք էլ մեր կարգին կազմեցինք այդ մատենագիտութիւններից դուրս մնացած եւ նրանց հրապարակման թուականներից յետոյ ստեղծուած, ներկայ շարագրանքի ստեղծման ընթացքում մեր նկատած՝ «Ղազար Փարպեցուն վերաբերող լրացուցիչ գրականութիւն» ժամանակագրական ցանկը, որ աշխատանքիս վերջում դրել ենք որպէս «Յաւելուած»⁹³:

⁸⁹ Lazar P'arpets'i, 'History of the Armenians' and the 'Letter' to Vahan Mamikonean, A Photographic Reproduction of the 1904 Tiflis Edition, with introduction and bibliography by Dickran Kouymjian, Classical Armenian Text Reprint Series, Delmar, New York, 1985, xl, xvi, 211 pages.

⁹⁰ Lazar P'arpets'i, The historian of the wars of Vardan and Vahan Mamikonean. An introductory essay and critical bibliography by Dickran Kouymjian, Delmar, New York, 1986, xl p.

⁹¹ Ղազար Փարպեցի, Մատենագիտութիւն, կազմեց Տիգրան Գույումճեան, հայերէնի վերածեց, լրացրեց եւ խմբագրեց Սամուէլ Մուրադեան, Երեւան, 1999, 24 էջ (Սր. Մեսրոպ Մաշտոց դպրատան մատենաշար, թիւ 4): Հայերէնը համապատասխանում է անգլերէնի xxvi-xl էջերին:

⁹² Անգլերէն տարբերակի «Հիմնական գրականութիւն» բաժնի ժամանակային սահմանները 1784-1986 թթ. են:

⁹³ Բոլորովին վերջերս հրատարակուել է՝ Ա. Սահակեան, Մովսէս Խորենացու «Հայոց

Իսկ այժմ ամփոփենք.

ա. Ղազար Փարպեցու Պատմութեան եւ Թղթի գիտական հրատարակութեան լոյսընծայման՝ 1904 թուականից անմիջապէս յետոյ տպագրուել են հեղինակի երկերի բնագրերի որակի բարելաւման նպատակ ունեցող եւ առ այդ կարեւոր նիւթեր շրջանառութեան մէջ դնող, շատ օգտակար մի շարք յօդուածներ եւ հրապարակումներ, որոնց հեղինակներն են՝ Յակովբոս վ. Տաշեան, Բարսեղ վ. Սարգիսեան, Նորայր Բիւզանդացի, Լեւոն վ. Աթճեան, Գրիգոր վ. Սարգսեան, Ներսէս վ. Ակինեան, Նորայր եպս. Պողարեան, Պարոյր Մուրադեան եւ Կարէն Իւզբաշեան: Այստեղ ներկայացրինք այդ հրապարակումները եւ ցուցադրեցինք Փարպեցու բնագրերի բարելաւման առումով ամէն մէկի արժէքը: Իսկ սա նշանակում է, որ այդ բոլորն ապագայում պատրաստուելիք բնագրի մէջ անպայման պէտք է նկատի առնուեն:

բ. Այդ յօդուածներից մէկի (Բարսեղ վ. Սարգիսեան) եւ Սահակ վ. Ճեմճեմեանի հրապարակած նիւթերի շնորհիւ այստեղ կարողացանք ճշգրտել Փարպեցու երկի վեներտիկեան ձեռագրերի պատկերը եւ ընդհանրապէս արժէքը, պարզեցինք նաեւ 8 թերթանոց Հ^ր 2183 մագաղաթէ թերթի պատառիկ-պահպանակ դառնալու ժամանակը եւ տեղը՝ 1441 թ., Արճէշ, հիմնաւորեցինք ապագայում ի նորոյ կազմուելիք բնագրի մէջ այս բոլոր ձեռագրերն անպայման համեմատելու անհրաժեշտութիւնը:

գ. Ակներեւ դարձաւ, որ անպայման պէտք է նկատի առնուեն նաեւ 1904ի տպագրութիւնից յետոյ առաջադրուած՝ բնագրի սրբագրութեան բոլոր, ընդհուպ մինչեւ Նորայր Բիւզանդացու վերջերս հրատարակուած «Նախնիք» ժողովածուի մէջ առկայ հարիւրաւոր առաջարկները:

դ. Նախկինում յայտնի կցկտուր տեղեկութիւնների փոխարէն կազմել ենք Սահակ Պարթեւի Պատմութիւն-Տեսիլի ճառընտրային ձեռագրերի ընդարձակ (57 միաւոր) մի ցանկ, որ մեծապէս օգտակար է լինելու Փարպեցու Պատմութեան գիտական նոր հրատարակութիւնը պատրաստելիս, նաեւ դառնալու է նոյն «Պատմութիւն-Տեսիլի» գրական պատմութիւնն ուսումնասիրելու ելակէտ:

պատմութեան» քնագրի պատմութիւն, Երեւան, հեղինակային հրատարակութիւն, 2015, 230 էջ. այստեղ կան նաեւ ուղղակի Փարպեցու անուան մատնանշմամբ գլուխներ. «Մովսէս Խորենացու Պատմութիւնը եւ Ղազար Փարպեցին» (էջ 173-98) եւ «Ղազար Փարպեցու մաշտոցապատումը՝ անուղղակի վկայութիւն Խորենացու նախնական քնագրի վերաբերեալ» (էջ 199-210), սակայն անգամ այս մասերը մեր արծարծած եւ ընդհանրապէս ընդունուած բնագրագիտական խնդիրների չեն վերաբերում, ուստի սա մեր ցանկի մէջ չներառեցինք:

ե. Կազմել ենք նաեւ Փարպեցուն եւ նրա երկերին վերաբերող՝ առկայ մատենագիտական ցանկերի մի լրացում, որ ունի 46 միաւոր գիրք ու յօդուած, որոնք նոյնպէս օգտակար են լինելու ապագայում արուելիք աշխատանքների ընթացքում:

Եւ, վերջապէս, որ ամէնակարեւորն է՝

զ. Փարպեցու Պատմութեան հիմնական ձեռագրի (ՄՄ Հ^մ 2639), 1904ի եւ 1933ի տպագիրների հատուածական-փորձնական համեմատութիւններով ապացուցեցինք, որ ներկայումս բաւարարող-ճշգրիտ որեւէ հրատարակութիւն չկայ⁹⁴, ուստի եւ պէտք է Փարպեցու երկի գիտական նոր բնագիր պատրաստել առկայ բոլոր կարեւոր ձեռագրերի եւ տպագիրների համեմատութեամբ, նաեւ արձանագրելով գիտական գրականութեան մէջ առկայ՝ բնագրի սրբագրութեան բոլոր առաջարկները. ի վերջոյ՝ ներկայ շարադրանքով ուղղագծեցինք պատրաստուելիք այդ բնագրի ստեղծման ճանապարհի կարեւորագոյն անելիքները:

ՅԱՒԵԼՈՒԾ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

- 1885 - Դուրեան Եղիշէ վ., Պատմութիւն հայ մատենագրութեան ի վաղ ժամանակաց մինչեւ մեր օրերն, տպագր. Գ. Պաղտատլեան (Արամեան), Կ. Պոլիս, 1885, էջ 24.
- 1887 - Բիւզանդացի Նորայր, Զննասեր, Ստոկհոլմ, 1887, պրակ Բ., էջ 16-58 (իմմտ. Նոյնը, Աշխ. Գ. Տեր-Վարդանեանի, Երեւան, 2005, էջ 26-42, որ առանձնատիպ է՝ ՊԲՀ, 2005/Բ., 101-143 էջերից).
- 1887 - Գաթրոճեան Յ. Յովսէփ, Հիւզերորդ դարու չորս հայ պատմագրութեանց ժամանակները.- Հանդես ամսօրեայ, 1887, էջ 9-12 (նկատի ունի՝ Կորիւն, Եղիշէ, Մ. Խորենացի, Ղ. Փարպեցի):
- 1887 - Մատաթեան Եղիշէ, Ղազար Փարպեցու պատմութեան Յառաջաբանը.- Հանդես ամսօրեայ, 1887, էջ 167-8 (սրբագրութեան առաջարկներ):
- 1895 - Զարամեան Նիկողայոս (գրախօս), Վահան Մամիկոնեան ըստ Ղազար Փարպեցու, Գրեց Յ. Ճաղարբեգեան, Տիփլիս, 1894.- Արարատ, 1895/Ե. 174րդ էջին յաջորդող չհամարակալուած էջին:

⁹⁴ Պնդելով, թէ Վննետիկի տպագիրների հիմք օրինակը (կամ օրինակները) ծագում է (են) անմիջապէս Ե-ից (իմա՛ ՄՄ Հ^մ 1891 ձեռ-ից) եւ առ այդ օրինակներ բերելն անելորդ համարելով՝ Փարպեցու 1904ի տպագիրը պատրաստողները գրել են. «Ընթերցողին մնում է հաւատալ մեր հաւաստիացմանը, մինչեւ որ լոյս տեսնի Փարպեցու մի նոր քննադատական հրատարակութիւն» (Փարպեցի, 1904, էջ Է.). ասել է թէ՛ սկզբից եւեթ իրենք իսկ իրենց կազմած բնագիրը վերջնական չեն համարել:

- 1900 - Օ., Ժամանակագրություն գործոց Վարդանանց. Ժամանակագրություն ըստ Եղիշե պատմագրի եւ Ղազարայ Փարպեցւոյ (Եղիշե. տպագրութիւն Վենետիկ, 1859. Ղազար, տպագրութիւն Վենետիկ).- Լումայ, 1900, Գիրք Ա., էջ 337-347:
- 1902 - Մալխասեանց Ստեփան, Գրիգոր Տէր Պօղոսեանի նկատողութեան առթիւ.- Զանդէս ամսօրեայ, 1902, էջ 190-191 (Փարպեցու Պատմութեան վերաբերեալ իր եւ Գր. Խալաթեանցի կարծիքները համընկել են անկախաբար):
- 1904 - Տաշեան Զ. Յակովբոս, Մատենախօսական. Պատմագիրք Յայոց. Ղ. Փարպեցի.- Զանդէս ամսօրեայ, 1904, Թ-Ժ., էջ 225-34⁹⁵:
- 1906 - Նահապետեան Զ. Գաբրիէլ, Նոր ուղղագրութիւններ Ղազար Փարպեցու սխալ ընթերցումների.- Բազմավեպ, 1906/Դ, էջ 166-8, Ե., էջ 204-10:
- 1907 - Արշամ, Անդրադարձութիւններ Ղազար Փարպեցւոյ մասին.- Բազմավեպ, 1907/ԺԱ., էջ 500-501 (սրբագրութեան առաջարկներ):
- 1907 - Մենասէր, «Աստուծոյ զօրութեամբն», «Որ եւ առ ոյժ կացածի արանց».- Բազմավեպ, 1907/Ե-Ը/368 (բանավեճ ընդ՝ Զ. Գաբրիէլ Նահապետեան, Նոր ուղղագրութիւններ Ղազար Փարպեցու սխալ ընթերցումների.- Բազմավեպ, 1906/Դ. էջ 166-8, Ե. էջ 204-10):
- 1907 - Նահապետեան Զ. Գաբրիէլ, Ուղղագրութիւնը ազգային հին մատենագրաց, Վենետիկ, Ս. Ղազար, 1907, 433, 2 չի. էջ
- 1907 - Տէր-Սահակեան Զ. Կարապետ, Դիտողութիւններ Փարպեցւոյ վերջին տպագրութեան վրայ.- Բազմավեպ, 1907/Դ, էջ 185 (վերաբերում է՝ Փարպեցի, Թիֆլիս, 1907ի վերահրատ-ը. սրբագրութեան առաջարկներ):
- 1907 - Տէր-Սահակեան Զ. Կարապետ, Չհեշտ պաշտաման տենչիւ. Առ Զ. Գ. Նահապետեան.- Բազմավեպ, 1907/Ե-Ը. էջ 316 (սրբագրութեան առաջարկներ):
- 1907 - Տէր-Սահակեան Զ. Կարապետ, Զայկական Նօթաներ.- Բազմավեպ, 1907/Թ-Ժ., էջ 432 (Ղազար Փարպեցու վկայութիւնը. Փարպեցիի «երգողական տառ» բացատրութիւնը համարում է ուղղելի՝ «երգողական տաղ», ըստ այնմ նաեւ սրբագրելի նրա վրայ հիմնուած բոլոր ենթադրութիւնները Յայոց հին երաժշտութեան մասին):
- 1908 - Նահապետեան Զ. Գաբրիէլ, Փաւստոսի ուղղագրութեանց նկատմամբ եղած դիտողութեանց պատասխան.- Բազմավեպ, 1908/Գ/97-9 (բանավեճ ընդ՝ Տէր-Սահակեան Զ. Կարապետ, Դիտողութիւններ Փարպեցւոյ վերջին տպագրութեան վրայ.- Բազմավեպ, 1907/Դ. էջ 185):
- 1909 - Ազեբեան Զ. Յարութիւն, Լատին լեզուն եւ գրականութիւնը Նախնեաց քով.- Բազմավեպ, 1909/Բ/59-66, Դ/145-60, ԺԲ/559-69, 1910 (բվնդ.՝ Ղ. Փարպեցւոյ թուղթն առ Վահան Մամիկոնեան եւ Ս. Երանոսի Յոյցք առաքելական քարոզութեանն, Ազաթանգեղոս-Փաւստոս Բիւզանդացի-Լատինագիտաց դպրոց եւ ոսկեդարեան հայերէնի գաղտնիքը):

⁹⁵ Տ. Գոյումճեանի մատենագիտութեան մէջ (էջ 8) նշուած էջերը՝ 8-9, սխալ են:

- 1909 - Վանատուր, Փարպեցւոյ թուղթին վավերականութիւնը.- Բազմավեպ, 1909/2., էջ 246-8 (բանավեճ ընդ՝ Աւգերեան Զ. Յարութիւն. Լատին լեզուն եւ գրականութիւնը նախնեաց քով.- Բազմավեպ, 1909/Բ., էջ 59-66):
- 1910 - Ակիսեան Զ. Ներսէս (Գրախօս.), Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւնն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1907.- Հանդէս ամսօրեայ, 1910, էջ 253:
- 1911 - Աբեղեան Մանուկ (գրախօս.), Զննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցւոյ ի Նորայրէ Բիւզանդացւոյ, Վիեննա, 1911 (եր. 161-174).- Արարատ, 1912, էջ 561-3 (ստորագրած՝ «Մ. Ա.»):
- 1914 - Չամիսեան Աբրահամ, Հայ գրականութեան պատմութիւն, մասն Ա., Նոր Նախիջեան, 1914, էջ 75-85 (Ղազար Փարպեցի):
- 1916 - Աթնեան Զ. Լեւոն, Ղազար Փարպեցւոյ պատմութեան յառաջաբանին նոր ընթերցում մը.- Բազմավեպ, 1916/Է-ԺԲ. էջ 145-53 (ունի առանձնատիպ հրատ՝ Վենետիկ. Ս. Ղազար, 1916. 31 էջ):
- 1926 - Ֆնտգլեան Գառնիկ, «Փաթաղիկէս».- Հանդէս ամսօրեայ, 1926, էջ 93-95 (Փարպեցու Թղթի մէջ առկայ այս բառը համարում է «կաթողիկէայս» ձեւի աղաւաղումը):
- 1930 - Նահապետեան Զ. Գաբրիէլ, Ուղղագրութիւնը Ղազարայ Փարպեցւոյ ճանէն «Առն եղեալ որդի» ուղղելի «Առ նեղել սրտի».- Բազմավեպ, 1930/Թ. էջ 367-8:
- 1931-1932 - Սարգսեան Զ. Գրիգոր, Տեսիլ Ս. Սահակայ Պարթեւի (քննութիւն եւ բնագիր).- Բազմավեպ, 1931/ԺԲ. էջ 529-36, 1932/Ա. էջ 12-21:
- 1952 - Արմէն Հրանդ Զ., Մարգարանը եւ սպարապետը, Լոս Անջելէս, 1952.
- 1952 - Արմէն Հրանդ Զ., Զննադատները ջղայնացած են, Լոս Անջելէս, 1952.
- 1959 - Անասեան Յակոբ, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա., Երեւան, 1959, էջ ԽԴ., ԽԹ., Ծ., ԾԱ-ԾԴ.:
- 1962 - Արմէն Հրանդ Զ., Հայկական գերագոյն ատեան. Վասակ Սիւնի (ամբաստանեալ), Պէյրութ, 1969.
- 1968 - Անթաքեան Փայլակ Փ., Սահակ Պարթեւի «Վարքի» եւ նրա հեղինակի մասին.- Պատմա-բանասիրական հանդէս, 1968/2, էջ 129-146:
- 1970 - Աղբալեան Նիկոլ, Պատմութիւն հայ գրականութեան.- տե՛ս Ամբողջական երկեր, հտ. Դ., Պէյրութ, 1970, էջ 351-361.
- 1971 - Պողարեան Նորայր Եսս., Հայ գրողներ. Ե-ԺԵ. դար, Երուսաղէմ, 1971, էջ 34-35 (Ղազար Փարպեցի).
- 1973 - Ակիսեան Զ. Ներսէս, ՏԵՐ-Պօղոսեան Զ. Պ., Մատենագրական հետազօտութիւններ. Ղազար Փարպեցւոյ Պատմութիւնը.- Հանդէս ամսօրեայ, 1973/Ա-Գ. էջ 1-22, Ժ-2. էջ 129-154, Է-Թ. էջ 257-286, Մի քանի մանր մատենագիրներ (Աղան Արծրունի, Մովսէս Կոսեաւոր կամ Փիլիսոփայ, Խոսրովիկ Թրագմանիչ, Բաբգէն կաթողիկոս Ռթմոյ գիւղէն՝ 502/3-508/9, Սիմէոն Բեր-Արշամացի).- Հանդէս ամսօրեայ.- 1973/Ժ-ԺԲ. էջ 393-422.

- 1982-1983 - Ճեմճեմեան Զ. Սահակ, Գեորգ Դպիր Տէր Յովհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները, Վենետիկ, 1984, էջ 16-17 (նախապէս տպ. է՝ Բազմավէպ, 1982/Ա-Բ. էջ 96-155, Գ-Դ. էջ 294-319, 1982/Ա-Դ. էջ 11-31, 38).
- 1983 - Իւզբաշեան Կարէն Ն., Ղազար Փարպեցի.- ՊԲՀ, 1983/4, էջ 179-193.
- 1986 - Օշական Յակոբ, Մատենագրութեան համար [Ղազար Փարպեցի - Ե. Դար].- Հասկ, ԾԵ. տարի, 1986, էջ 312-323.
- 1987 - Ալեքսանեան Աշոտ, Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկը միջնադարեան նամակի տեսութեան լոյսի ներքոյ.- Հայաստանի ԳԱ Լրաբեր հաս. գիտութիւնների, 1987/9, էջ 59-67.
- 1992 - Զիպարեան Զ. Կիրեղ վ., Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1992, էջ 131-8, 140-143.
- 1998 - Nersessian rev. Vrej Nerses. Movses Khorenatsi and Ghazar P'arpetsi.- Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, ԺԸ. հատոր, 1998, էջ 195-206.
- 1999 - Սուրադեան Պարոյր, Երկու խօսք [Տիգրան Գոյումճեանի «Ղազար Փարպեցի. մատենագիտութիւն» աշխատութեան հրատարակութեան առթիւ], Երեւան, 1999.
- 2002 - Մաթեոսեան Արտաշէս, Ղազար Փարպեցին մաշտոցեան գրերի մասին.- ՊԲՀ, 2002/2, էջ 93-111.
- 2002 - Սուրադեան Պարոյր, Ղազար Փարպեցի.- «Հանդէս Ամսօրեայ», 2002, թիւ 1-2, էջ 207-228.
- 2003 - Հասրաթեան Սուրադ, Էջմիածնի Մայր տաճարի ճարտարապետութիւնը Ղազար Փարպեցու օրոք.- ՊԲՀ, 2003/2, էջ 266-271.
- 2003 - Սուրադեան Պարոյր, Ղազար Փարպեցի եւ իր «Պատմութիւն Հայոց»-ը.- Մատենագիրը Հայոց, հտ. Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2199 (հեղինակակից՝ Կ. Իւզբաշեան).
- 2005 - Մանուկեան Գուրգէն, Ղազար Փարպեցու երկերի արեւելահայերէն վերջին թարգմանութեան հանգամանքները.- ՊԲՀ, 2005/2, էջ 166-182.
- 2007 - Յակոբեան Նիրա, Ղազար Փարպեցին եւ Ժամանակի նիւթական մշակոյթը [երկու նկարով]. «Էջմիածին», 2007, Ժ., էջ 18-23:

РЕЗЮМЕ

Сразу же после выпуска научного издания «Истории» и «Послания» Лазаря Парпеци в 1904 г. были сделаны ряд публикаций с целью улучшения качества текстов трудов автора, вместе с которыми следует сравнить все рукописи «Истории» для публикации будущего критического текста, обязательно имея в виду все предложения по коррекции текста. Отрывочными сравнениями основной рукописи "Истории" Парпеци изданной в 1904 и 1933 гг. доказано, что ныне не существует удовлетворяющего издания текста. Уточнены также особенности всех наличных рукописей и фрагментов текста "Истории", хранящихся в разных собраниях армянских рукописей, доказана необходимость использования всех рукописей в будущем критическом тексте.

SUMMARY

Immediately after the publishing of the scientific edition of the “History” and the “Message” of Łazar P’arpets’i in 1904, a number of publications have been realized to improve the quality of the author’s works, to which we compared all manuscripts of the “History” for publication of critical text in future, taking into account all text correction proposals. Partitive comparisons of the main manuscript editions of P’arpetsi’s “History” in 1904 and 1933 also proved that currently there is no satisfying and valid edition of the text. It was also refined that peculiarity of all the existing manuscripts and text fragments of the “History”, kept in different collections of Armenian manuscripts, must be used in the future critical text.

